ԳԻՐՔ LIX

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀՈՒՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

† Պարոնեան. պատկեր.
Նոր տարի Յակոբ Պարոնեան 3
I Խիղճդ Թաղեցիր } բանաստ. Յար. Պեսրոսեան . . 7
II *** }
Ինքնակոչը Լ. Մուրավիինի. Թարգմ. Տ. Վ. 8
Տ. Յակոբ Բ. Տարսոնացի և Մխիթար Գոշերցի Մ. աե. Օրմանեան 23
Նորագոյն պատմագիտութիւն Կարլ Լամբրեխտի Pessimist 36
Ժողովրդի մէջ. Բոզէդերի. Օր. Ն. Աղանեանց 43
*** Բանաստ. Յար. Պեսրոսեան 49
Հարուստի մայրը. Ս. Բօճճօր 50

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1909 թուականը։—Լուրեր։— Խմբագրութեան պատասխաններ։—Ստացուած գրքեր 55

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԵՂԻՇԷԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեամբ

ԳԻՒՏ ա. ք. ԱՂԱՆԵԱՆԻ

ԳԻՐՔ LIX



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՍ. 7.
1909

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

Էլեքտր. Ն. Աղանեանի

ՆՈՐ ՏԱՐԻ

1884՝ թէ 1882

Ազգային լրագիրք օտար թերթերէն քաղելով և թարգմանելով ծանուցին մեզ թէ ոչ ևս է 1885-ը, թէ անդունդին մէջ թաղուեցաւ նա, թէ ժամանակին հոսանքովն կամ թևերովն կամ անիւներովն կամ առագաստներովն սլացաւ գնաց — ըստ որում մեր խմբագիրներն ժամանակն երբեմն թռչուն կը ներկայացնեն երբեմն կառք երբեմն նաւ և երբեմն գետ —։ Իւրաքանչիւր խմբագիր իւր կարողութեանն և ճաշակին համաձայն դամբանական մը կարդաց նորա դիակին վրայ։ Մին իւր դամբանականով ցաւ յայտնեց թէ բաւական ժամանակէ հետէ հեռի էր իւր սիրուհիէն զոր մահու չափ կը սիրէ. ոմն իւր տապանականով ցաւեցաւ թէ իւր բաժանորդներէն ոմանք լրագրոյն բաժանորդագինն չէին հատուցած. ուրիշ մը դեռ կը շարունակէ 1883-ի կենսագրութիւնն։

Լրագրաց կողմէ տրուած ամեն լրոց կոյրզկուրայն հաւատալու միամտութիւնն չունենալով՝ անհնար է ինձ հաւատք ընծայել 1883-ի մահուան, 1883-ի որ դեռ ծնած իսկ չէ մեզի համար։

Ես որ սովորած չեմ կուրօրէն հնազանդիլ այն սովորութեանց զորս նախապաշարումն կտակած է և որոց ճշմարտութիւնն ակներև կը տեսնուի, նոր տարուոյս առթիւ խոնարհաբար և անկեղծաբար կառաջարկեմ սիրելի ազգիս որ, ի բաց նետելով օտարաց նմանելու հնաւանդ

և յոռի սովորութիւնն, մերժէ 1884 թուականն, և տարի ս'ալ ետ երթալով, 1882-ն ընտրէ իրեն թուական և զայն գործածէ քանի մը տարիներ։ Այս կարծիքն, եթէ յիշողութիւնս չխաբեր զիս, կարծեմ ուրիշ անգամ ալ յայտնած եմ, և այսօր իրերն կը խրախուսեն զիս այժմ աւելի ոյժ տալ այս կարծեացս, գոնէ առաջքն առնելու համար այն անպատեհութեանց որ կրնան աղբերանալ ամեն տարւոյն սկիզբն առանց բանաւոր պատճառի թուական փոխելէ։

Ո՞վ չսիրեր նորութիւնն, ո՞վ չփափաքիր նոր հագուստներ հագնել, ո՞վ չբաղձար հին տարին թողուլ և նորը գնել, այսուամենայնիւ նոր տարի գործածելու համար հարստութիւն պէտք է։ Մեր ազգն աղքատ է և հետևապէս կրնայ տակաւին երկար տարիներ հագնիլ այն տարիները զորս հինցուցած են հարուստ ազգերն։

Զգուշանանք ամեն բան վարդագոյն տեսնելէ, սոսկանք ամեն ինչ ծիրանեգոյն նկարելէ։

Այն ազգերն որ իրենց հանճարոտ մարդկային զարգացման պատմութիւնն նշանաւոր և փայլուն էջերով կը պճնեն և կը զարդարեն, բնականաբար իրաւունք կստանան իրենց մեծութեանը պատշաճ թուական ունենալ. իսկ՝ ընդհակառակն՝ այն ազգերն որոնք յետամնացութեան մէջ հոստատաժտութեան մրցանակին կարժանանան, չեն կրնար մեծ ազգաց թուականն ընդունիլ առանց ծաղու նշաւակ լինելու։

Մեր վիճակը, մեր քսակը չներեր, ընթերցող, նոր տարի գնել։

Հասակն չերկննար երկար հագուստով, ընդհակառակն երկար զգեստ մը նոյն իսկ միջահասակներն կարճահասակ կը ցուցնէ։

Նոյն իսկ 1882 թուականն՝ զոր առաջարկեցի մեր ազգայնոց՝ շատ մեծ է մեր գլխուն համար, և եթէ չվախնայի մեր լաւատեսներու քարկոծումէն՝ պիտի խնդրէի ազգէն որ 400 թուականէն սկսէր. այս թուականն հա-

մեստ, կոկիկ և մեր վիճակին յարմար թուական մ'է և ամեն հայ կընայ ճակատաբաց գործածել զայն։

Կը խնդրեմ, ձեր աչաց առջևը բերէք մի անգամ հազար ութն հարիւր ութսուն և չորս թուականն. քննեցէք և պիտի տեսնէք թէ վիհ կայ նորա և մեր ընտանեկան, կրթական, ընկերական, արհեստական, վաճառականական, գրական, գիտական, վարչական և խորհրդարանական վիճակին մէջ տեղ։ Ունինք երեսփոխական ժողով, ձեռնհասութեան դիւան, դաստիարակութեան դիւան, կալուածոց դիւան, համարակալութեան դիւան, յարաբերութեան դիւան, իրաւասութեան դիւան, նախաձեռնութեան դիւան, խմբագրութեան դիւան, անձնական կիրքեր, հիւանդ քալանպուլներ, խօսք Կոնգեմներ, կը ըողոքեմներ, ի կարգ կը հրաւիրեմներ, զանգակ, գրասեղան, հարցում, հարցապնդում, յղում, թեր ու դէմ խօսող ատենաբաններ, կուսակցութիւններ, օրակարգ, դռնփակ նիստեր, վրան բաց նիստեր, այս ամենն ունելով ունիմք, բայց այս ժողովոյն ատենագրութիւններն տպելու դրամ չունինք։

Այսչափն կը բաւէ, կարծենք, մեր ներքին վիճակին վրայ գաղափար մը կազմելու համար և աւելորդ է զայն երկարօրէն նկարագրել աստ։

Արդ, անհրաժեշտ հարկ է կամ թուականն մեր վիճակին յարմարցնել և կամ մեր ընթացից մէջ փոփոխութիւններ մուծանել, որովհետև ոչ այս ընթացքը մեզի կը վայելէ ոչ ալ 1884 թուականը։

Եթէ իրաւացի են դիտողութիւններս և բանաւոր—և կը հաւատամ թէ այնպէս են—կը մաղթեմ որ ամեն կարգի ազգայինք, միշտ աչաց առջև ունենալով ծանիր զքեզն, միմեանց ձեռն կարկառեն և մէկդի դնելով անձնական կիրք, գոռոզութիւն, ինքնասիրութիւն և փառամոլութիւն, ի միասին աշխատին ազգին զարգացման, եթէ կը փափաքին որ մեր ազգն ալ իրեն դրացի ազգաց քով կարենայ պատուաւոր դիրք մը գրաւել։

Կը կնքեմ ուրեմն խօսքս քանի մը կարևոր բարեմաղթութիւններ ընելով։

Դաս չունեցող դասատուներուն եթէ ոչ նոր տարի գոնէ նոր կոշիկ կը բարեմաղթեմ.

Ողջմտութիւն՝ երեսփոխանաց ոմանց.

Հրագրական ասպարէզին մէջ աւելի ողջախոհութիւն և նուազ սիրահարութիւն.

Բանաստեղծներու բեղմնաւոր մուսայներ և բանահիւսներու ճոխ յանգեր.

Ամեն աստիճանի ազգայնոց արժանավայել յարգանք.

Վիճաբանութեանց մէջ նուազ հայհոյութիւն—ըստ որում բոլորովին ջնջելն անկարելի է—և քիչ մը տրամաբանութիւն—ըստ որում շատն անհնար է առ այժմ—.

Սուտանուններու. ներքև իրենք զիրենք գովաբանող գրիչներուն քիչ մը շնորհք որոց վայել է ծաղր և ծիծաղ այժմ և միշտ։

† ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

I

ԽԻՂՃԴ ԹԱՂԵՑԻՐ

Խիղճդ թաղեցիր կապար կրծքիդ տակ,
Եւ որպէս գազան—անխիղճ անողոք,
Արնոտ զոհերի առար ախորժակ,
Դու, ժանտ ոճրագործ, մարդախանձ Մողոք։

Խիղճդ թաղեցիր... Բայց կը գայ մի օր,
Երբ նա կարթնանայ,—կուրծքդ կը պայթէ,
Սիրտդ կծկուած ու կտոր-կտոր...
Զարթնած խիղճդ քեզ միշտ պիտի խայթէ...

II

***

Զգիտեմ՝ ինչու սիրում եմ այսպէս
Զայրացկոտ հոգու անզուսպ պոռթկումներ,
Մոլեգնած ծովի ալիք փրփրադէզ
Եւ ամպոտ երկնի որոտ ու շանթեր։

Զգիտեմ՝ ինչու սիրում եմ, պաշտում
Ահեղ փոթորկի վայրագ շառաչիւն,
Աղմուկ ու շփոթ կռուի գոռ դաշտում
Ու ծովի ալեաց կատաղի շաչիւն։

Զգիտեմ նաև, թէ ինչու արդեօք
Հրճւում է հոգիս անհունի դիմաց.
Եւ դէպի հեռուն՝ հպարտ և անհոգ,
Ուզում է ճախրել թեւերը պարզած...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԻՆՔՆԱԿՈՉԸ.

(Լ. Մուրավին)

Քրիստոսի ծննդեան երեսուն և հինգ թուականին և Հռոմի կայսր Տիբերիոսի թագաւորութեան քսան և մէկերորդ տարին Հրէաստանի Յուդայում մի դէպք պատահեց, որ տակն ու վրայ արաւ ամբողջ երկիրը. դուրս եկաւ մէկը որ իրեն անուանում էր Հերովդէս մեծի որդի Աղէքսանդր և աշխատում էր ծեռք ծգել Հրէաստանի թագաւորական գահը։ Աղէքսանդր արքայորդին, որ մեղադրւում էր հօր դէմ սարքած դաւադրութեան մէջ, մահուան դատապարտուեցաւ հօր կողմից միւս դաւադիրների հետ։ Անցել էր Աղէքսանդրի դիւատումից և նոյն իսկ Հերովդէսի մահուանից երեսուն տարի, երբ յանկարծ ամբողջ Յուդայում լուր տարածուեցաւ թէ Աղէքսանդր արքայորդին կենդանի է և թէ նորա տեղ մահուան պատժի է դատապարտուած եղել բոլորովին մի ուրիշ մարդ. շատ շատերը հաւատացին այդ լուրերին և անցան կեղծ թեկնածուի կողմը. և երբ այս լուրերը հասան և Տիբերիոսի ականջը, կայսրը հրամայեց կալանաւորել ինքնակոչին և բերել իւր մօտ՝ Կապրէտ կղզին, որաեղ, համարեա, մշտապէս ապրում էր Հռոմի ամենակարող վեհապետը։ Կայսեր հրամանը կատարուեցաւ և նա նշանակեց այն օրը, երբ ինքնակոչ թեկնածուն պիտի ներկայացնէին իրեն և դատաստանը պիտի տեսնուէր։

Այդ օրը Տիբերիոսը, հագած լայնեզր ոսկեկար ծիրանի արքայական թիկնոցը, նստած էր Կապրէայի իւր փարթամ, հովասուն ամարոցներից (villa) մէկի այդում։ Իւր յաղթ դրլուխը ետ ծղած փղոսկրի քանդակէն տրօնօսի [1]) գահի վագրի մորթով ծածկուած թիկունքին, ծերունի կայսրը մտածկոտ

[1]) Տրօնօս=գահ, յունարէն՝ աստուածների և թագաւորների նստարանը։

հայեացքը ուղղել էր իւր առաջը տարածուող ծովին, որ հանդիստ ծփում էր ժայռերի ստորոտին. պճնուած իւր պիքների մետաղապոյն արտացոլումներով։ Երբեմն-երբեմն աչքերը բարձրացնում և հրեւում էր կապոյտ անամպ երկնքով, անհուն կապտակով թաւալուող յաղթական «Հելիոսի [1]) լուսարձակ կառքով» և հեռւում երևացող սէգ, առեղծուածական վեղուվով, որի ատրաշէկ արտաշնչութիւնը արևլոյսի ժամանակ սաւառնում էր հրաշունչ հսկայի վրայ իբրև գորշագոյն ամպեղէն մի սիւն, իսկ գիշերը առկայծում էր բոցերով։ Կայսեր նստած գարաւանդի շուրջը փռուած անուշաբոյր ծաղկեթմբերի և թփուտների բոյրով առլցուած զեփիւռը գգւում, շոյում էր թեթև հովերով նորա դեռ ևս գեղեցիկ, աղնիւ, խելացի և եռանդուն, կարծես մարմարիոնից կերտած դէմքը, քնքշաբար հովին էր տալիս նորա թանձր, ալեծածան, արծաթափայլ, թանգագին ոսկէ օղով գրկած մազերը և երկչոտ շարժումներով խաղում էր նորա ծիրանի թիկնոցի ծալքերի հետ։ Մի փոքր հեռու, դարաւոր սօսիների և կաղամախների թանձր սաղարթի միջից երևում էր Արամազդի անուան նուիրուած ամարոցը, կայսերական բոլոր տասնևերկու ամարոցներից առաջնագոյնը, որ ծիւնափայլ մարմարիոնէ ժանեաքով (deutelle) շրջապատել էր Կարէա կղզու ժայռուտների կատարները։ Թռչունների ճռռողը խառնուել էր ծովի կոհակների մելամաղձիկ ճղպիւնի և հեռուից լսուող ձկնորսների երգի հետ, որոնց խայտաբղէտ մակոյկները անդադար երթևեկում էին գեղատեսիլ ծովածոցի ափերով։ Երբեմն ոչ-հեռու անցնում էին և հռոմէական նաւատորմի պատերազմական նաւերը և ողջունում էին կայսերական օթևանը կէս իջեցրած ծիրանէ մետաքսեայ դրօշներով, որ կարծես կրակ էին կարել իրենց միջից ցոլացող արևի շնորհիւ։

Տիբերիոսի մօտ ոչ ոք չկար. կարծես, կայսեր պահապանը նորա գահոյքի վերևը թառած ոսկէծոյլ արծիւն էր միայն, որ սփռել էր իւր լայն թևերը Հռոմի կայսեր առիւծ-գլխի վրայ։

---

[1]) Հելիոս=արև (յունարէն). արեգակ—աստուածը։

Միայն հեռուում, ժայռերի եղերքին ամբողջապէս ոսկեփայլ զէնքերով սպառազինուած, արծաթների պէս անշարժ կանգնած էին պրիտորիանների հերթապահները։ Ծառերի թանձր սաղարթի միջից երևացող նոցա նիզակների ծայրերը կայծակի պէս էր շողշողում։ Ամարոցներից լսւում էր մարդկանց զործունէութեան խուլ աղմուկ, որ խիստ հակադրութիւն էր կազմում ծիրանակիր ալևորի շուրջը թագաւորող լռութեան հետ։

Բայց ահա Արամազդի ամարոցի կողմից լսուեցան մէկի արագ և հաստատ քայլերը։ Տիբերիոսի նուրբ լսողութիւնը իսկոյն գրաւուեցաւ դէպի պարտիզի ուղիների մանր, կարմրահատ աւազի վրայ քայլող ոտնածայնը։ Կայսրը յուշիկ գլուխը դարձրեց դէպի քայլողը և տեսաւ պալատական հագուստով մէկին—նոմենկլատորին [1])։

Խոր գլուխ իջեցնելով կայսեր, նա լռիկ կանգ առաւ մի քանի քայլ հեռաւորութեամբ։ Պալատական կարգով նա իրաւունք չունէր առաջինը ինքը խօսելու, այլ պարտաւոր էր հարցի սպասել։

—Ի՞նչ ունիս ասելու, Լիւցինիա,—հարցրեց Տիբերիոսը, գլխի թեթևակի շարժումով պատասխանելով խոնարհ ողջունին։

—Այն մարդը, որն իրեն անուանում էր Հրէաստանի հանգուցեալ Հերովդէս արքայի որդի Աղէքսանդր, այստեղ է, մեծազօր կայսր,—զեկոյց նոմենկլատորը։

—Թող այստեղ բերեն ինչպէս հարկն է, հրամայեց կայսրը։

Մի քանի բոպէից յետոյ երիտասարդ, գեղեցկադէմ և վայելչակազմ դրանիկ պահնորդների հարիւրապետը (ցենտուրիոն), փայլուն սպառազինութեամբ, բերեց Թիկնապահ պրիտորիացիների մի փոքրիկ խումբ։ Սկիզբը կիսաշրջան կանգնելով կայսեր առաջ և վեր բարձրացնելով պսպղուն նիզակները, քաջարի Թիկնապահները բացականչեցին.

---

[1]) Նոմենկլատոր=Պալատական ծառայող, որի պարտքն է զեկուցանել կայսեր։

—Փառք մեծապօր, կարող և անպարտելի կեսարին։

Տիբերիոսը պատասխանեց ձեռքի ողորմած շարժումով, որի վրայ փայլում էր մի ահագին յակինթ մատանի, Օգոստոս կայսեր պատկերով՝ հռոմէական կայսրների իշխանութեան խորհրդանշով։

Ապա հարիւրապետը կարգով կանգնեցրեց գահի երկու կողմը թիկնապահներին, իսկ ինքը մերկացրած սրով կանգնեց կայսեր գահոյքի ետևը։

Այնուհետև մօտեցաւ պալատականների շքեղ շքախումբը, որին գլուխ էր անցած ծերացած դողդոջ ոտները հազիւ քաշ տուող Հռոմի պրեֆեկտ, ինն սուն տարեկան Լիւցիյ Կալպուրնիյ Պիզոնը, որին անմահացրել է Հօրացիոսը իւր հրաշալի ներբողների մէջ։ Նորա համար բազկաթոռ էր դրուած գահի աջ կողմը։ Միւս բարձրաստիճան պալատականների համար նոյնպէս բազկաթոռներ էր դրուած, բայց մի փոքր աւելի հեռու։

Երբ կայսրին ողջունելուց և գլուխ տալուց յետոյ ամենքը նստեցին իրենց տեղերը, Տիբերիոսը ձեռքով նշան արեց։ Շքեղ հագնուած մանր պալատականների խմբից սկսեցին մէկը զատուեցաւ և արագ ուղղուեցաւ դէպի հեռուում երևացող շինութիւններից մէկը։ Շուտով երևեցաւ մի նոր թափօր։ Պրիտորիանցիներին պահս կով շրջապատուած քայլում էր յիսունն անցած, հրէական դէմքով, փոքրիկ։ բայց սպիտակն արդէն շատացած մօրուքով մի մարդ։ Նորա ուսերին ձգած էր շքեղ մետաքսէ ծիրանեգոյն բոսոր թիկնոց, հարուստ բանուածքով, իսկ գլխին փայլում էր փոքրիկ ոսկէ թագակապ, որ կրում էին հրէաստանի արքայորդիները։

—Կարծէք, Կայիոս Ցեզարն է, չէ՞,—հարցրեց Պիզոնը, որի աչքերը հեռուն չէին կարում և եկողի հագուստից էնթադրեց, որ մօտեցողը գահաժառանգն է, որ յետոյ Կալիգուլա կոչուեցաւ։

—Ոչ, Կայիոս Ցեզարը գտնուում է Ալբանական լեռների իւր ամարոցում, ժպտերես պատասխանեց Տիբերիոսը։ Բայց

նա էլ այդպիսի զգեստներով միայն թատրոնական բեմի վրայ է երևում։

—Ա՜, ուրեմն եկողը ինքնակոչ թեկնածուն է, կռահեց Պրեֆեկտը։—Վատ չէ հագուած-կապուած, երևի նա էլ իւր դերը կատարելու համար։

Կանգ առնելով կայսեր առաջ, ծիրանակիրը խոնարհ, բայց իւր սեփական արժանապատուութիւնը պահպանող, լռիկ գլուխ խոնարհեց նորան։ Ներկայ եղողները անհամբեր հետաքրքրութեամբ դիտում էին նորեկ անծանօթին։

—Այդ դո՞ւ ես, ուրեմն, որ քեզ անուանում ես Հրէաստանի հանգուցեալ Հերովդէս արքայի որդի՝ Ագրիպանդը,—հարցրեց յունարէն Տիբերիոսը, իւր խորաթափանց աչքերի արագ հայեացքով չափելով իւր առաջ կանգնած մարդու ամբողջ կերպարանքը, որ կարծես ինքն իրեն կորցրած մարդու տպաւորութիւն էր թողնում, չնայելով իւր շքեղ հագուստին։

—Ոչ միայն անուանում եմ, այլ իսկապէս և Մեծն Հերովդէսի որդին եմ, մեծազօր կայսր,—մի քիչ շփոթուած պատասխանեց անծանօթը նոյն լեզուով։

—Ագրիպանդը, իւր ազգից Մեծն Հերովդէս կոչուած արքայի որդին, սորանից երեսուն և երկու տարի առաջ մահուան պատժի է ենթարկուած Սեբաստիա քաղաքում.—հանդիստ ու անխռով արտասանեց Տիբերիոսը.—Մի՞թէ դու էլ ես Աստուած, որ կարողացար յարութիւն առնել ծեր մարդարէ Նազովրեցի Յիսուսի պէս, որին հէնց ինքներդ սպանեցիք խաչի վրայ։

Նորեկն անօգնական աչք ածեց իւր չորս կողմը, կարծես շրջապատողներից գոնէ պաշտպանութիւն գտնելու յուսով, բայց լոկ միայն ծաղրի, հետաքրքրութեան ու չարախնդաց հայեացքների հանդիպելով, աւելի ևս շփոթուեցաւ և պատասխանեց դողդոջ ձայնով.

—Ո՛չ, մեծազօր կայսր, ես... ես Աստուած չեմ... Ես միմիայն մահուան դատապարտութիւնից ազատուեցայ...

—Մենք արդէն մեր սեփական աչքերով տեսնում ու համոզուում ենք, որ դու, յիրաւի, մահից ազատուել ես, բարե-

սիրտ հեղնութեամբ շարունակեց կայսրը։—Ես ասում եմ, որ մահուան պատժի է ենթարկուել Հերովդէս արքայի որդի Ա-ղէքսանդրը։ Այդ մասին կան արձանագրութիւններ, վաւերացրած կարևոր իշխանութիւնների կողմից։

Անծանօթն աւելի ու աւելի էր շփոթւում։

—Օգոստափառ կայսր, լացակումած ասաց նա,—ես պատժի չենթարկուեցի միմիայն այն պատճառով, որ բարեկամներս ժամանակին կարողացան ազատել ինձ բանտից և տեղս ուրիշ մէկին դնել, որ շատ նման էր ինձ... Երեսուն տարուց աւելի ես ծածկուած էի ուրիշ անուան տակ, չվստահանալով միջնորդել Օգոստոս կայսեր և քո առաջ իմ հայրենական գահի ժառանգութեան իրաւունքներս վերականգնելու և ինձ ժառանգ ճանաչելու համար... իսկ ինչ վերաբերում է այդ իրաւունքներին, ապա ես կարող եմ ներկայացնել բազմաթիւ վկաներ, որոնք կը վկայեն և կապացուցանեն...

Օտարականը դդալով Տիբերիոսի իւր վրայ սևեռած հայեացքը, կտրեց խօսքի թելը և ակնյայտնի երկիւղով նայեց կայսեր։

—Հապա, մի քիչ աւելի մօտեցիր ինձ,—յանկարծակի հրամայեց Տիբերիոսը։ Մի վախենար, ես մարդ չեմ կծում,—ժրպտալով աւելացրեց նա, նշմարելով օտարականի անվստահութիւնն ու խիստ յուզումը։

Երկիւղից դողը բռնած, բայց և չհամարձակուելով հրամանը չկատարել, նա մօտեցաւ Տիբերիոսին, որը երկու ձեռքով բռնելով նորա ուսերից, մի քանի վայրկեան նայում էր նորա դէմքին, իւր հրուտ աչքերի սուր հայեացքով նորա հոգու խորը թափանցելով։

—Ոչ, դու Հերովդէսի որդին չես,—հաստատապէս ասաց նա վերջապէս, իրենից դէն հրելով օտարականին։—Ես տեսել եմ Ադէքսանդրին, երբ նա դեռ ևս քսան տարեկան էր։ Չնայելով նորան, որ այն օրից անցել է աւելի քան երեսուն տարի, բայց ես անշուշտ կը ճանաչէի նորան... Եւ առհասարակ քո մէջ ազնուական զարմի ոչ մի նշան չկայ... Աւելի լաւ է, առանց պատէ պատ ընկնելու բացայայտ ասես՝ ով ես դու և ինչպէս է գլուխդ մտել այդ անհեթեթ միտքը, իբրև

արքայական ներկայացնես քեզ, այն ինչ քո մէջ ոչինչ արքայական նշոյլ չկայ։ Միթէ կարծում էիր, որ կարող էիր մոլորեցնել նոյն իսկ ինձ։ Զէ, բարեկամ, եթէ նոյն իսկ Աղէքսանդրին էլ տեսած չլինէի, հաւատա, կարող էի խղճուկ աքաղաղը արծուից ջոկել... Մի վախենար ամէն ինչ պարզապէս խոստովանելու. իրենց մեղքերը անկեղծօրէն խոստովանողների համար մէջս թերևս գթասրտութիւն կգտնուի, իսկ յամառողների համար կարող է գտնուել և մի ուրիշ բան... Ասա,—աւելացրեց կայսրը խիստ ձայնով, բայց և մի մոռանար, որ այստեղ թատրոնական բեմ չէ և մենք չենք ժողովուել կատակերգութիւն խաղալու համար։

Օտարականը մի փորձ էլ արեց Ինալու իւր բռնած կեղծ բարձրութեան դիրքի վրայև արդէն արժանապատուութեան գիտակցութեան զգացումով կամենում էր ուղղել իրանը, բայց յանկարծ զգաց, որ այդ նենգաւոր բարձրութիւնը վերջնականապէս փուլ եկաւ իւր ոտքերի տակ և նա, բարձրածայն հեկեկալով, ծունկ չոքեց իւր թագակիր դատաւորի առաջ։

—Հանդստացիր և խօսիր, բարեկամ.—մեղմով շարունակեց Տիբերիոսը,—Կկամենայի, որ առաջս կանգնած և ոչ հողի մէջ շաղղուած լինէիր, բայց նկատում եմ, որ քեզ համար մի այսպիսի ծանր բոպէի ժամանակ դու օգնութեան ես դիմում մայր հողին։ Նորա կարող կրծքից դուժ ա՛ռ նոյնչափ համարձակութեամբ խոստովանել ճշմարտութիւնը, ինչպէս մինչև այժմ սուտն ու կեղծիքն էիր տարածում... Ասա, ո՞վ ես դու։

—Ամէն ինչ կբանամ քո առաջ, բարեդութ կեսար,—հեծկլտոցով դուրս թռաւ օտարականի յուզմունքից տակն ու վրայ լինող կրծքից։—Նատ ուրախ եմ, որ կարող եմ ասել սրտինս... դէն ձգել ինձնից այն ծանր բեռը, որ ճնշում է ինձ... Ես յոժարեցի ինձ վրայ առնել այս ծանրութիւնը, չիմանալով, թէ ինչ եմ անում... Կամենում էի բարիք գործել, բայց հիմքը չարութեան վրայ դրի, իսկ այդ չարիքը կլանեց բարիքը և աճեց, մեծացաւ, մի ահագին սար դարձաւ, որ ծանրացաւ ուսերիս վերայ և ճնշում—տրորում է ինձ... Բայց ես կարծում էի, որ վաղ թէ ուշ, կը յաջողեմ այս զարհուրելի ծանր բեռան

շնորհիւ նպատակիս հասնեմ... Օ՜, ամենակարող կայսր, թէ որ գիտենայիր...

Ցուսահատ հեծկլտոցը բոլորովին չլատեց նորա ձայնը, բայց կամաց-կամաց խեղճը մինչ այն աստիճան ինքն իրեն զրսպեց, որ նորից խօսելու կարող եղաւ։ Ծունկի գալով և թաշկինակով ծածկելով հոգեկան յուզումից այլակերպուած և արցունքով ողողած դէմքը, նա աւելի հաստատ ձայնով շարունակեց.

— Ես՝ հարուստ հրէայ վաճառականի որդի եմ և անունս յիրաւի, Աղէքսանդր է... զոնէ այդ բանի մէջ սուտ չեմ խօսել... Որպէսզի կարողանայի բարձրագոյն ուսում ստանալ, հայրս զեռ ևս տարեկան հասակումս ուղարկեց Ամէնքում ապրող իւր եղբօր մօտ։ Այդտեղ Ինացի մինչև քսաներկու տարեկան լինելը, լսելով նոյն ժամանակի ամենայայտնի ուսուցիչներին։ Սովորեցի յունարէն և լատիներէն և խօսում եմ այդ լեզուներով նոյնչափ ազատ, որչափ իմ մայրենի լեզուով։ Սիրում էի ժողովային ճանապարհորդութիւններ, ուստի և հօրս նաւերով ամբողջ Միջերկրական ծովը կտրել եմ ամեն ուղղութեամբ։ Երբ մօտաւորապէս երեսուն տարեկան էի, մեռաւ հայրս և ես ահագին կարողութեան ժառանգ դարձայ, որովհետև միակ որդին էի։ Շարունակեցի հօրս գործը և հարստութիւնս աւելի բազմապատկեցի։ Հերովդէսի սպանուած որդու թեկնածուի միտքը շատ վաղուց չէ, որ գլուխս մտաւ, տարի ու կէս սոլանից առաջ էր։ Այդ ժամանակ հայրենիքումս աշխարհիս վրայ կատարուած ամենամեծ դէպքը կատարուեցաւ,— աշխարհ եկած Աստուծոյ Որդին խաչուեցաւ, յետոյ յարութիւն առաւ և երկինք համբարձաւ։ Նորա բազմաթիւ հրաշքները, Նորա հրաշալի յարութիւնը և երկինք համբառնալը ինձ ևս ստիպեցին բոլոր սրտով հաւատալ Նորան... Դու չիշեցիր, մեծազօր կայսր, Նազովրեցի Յիսուսի մասին։ Հէնց Նա ինքն էր Աստուծոյ Որդին։ Նա երևեցաւ հասարակ մահկանացուի կերպարանքով և իւր կարճատև կեանքն անցրեց ժողովրդի մէջ, հրաւիրելով նորան գնալ իւր ետևից իւր երկնաւոր հօր արքայութիւնը, սիրոյ ճշմարտութեան և բարութեան թագաւորութիւնը։ Բայց մարդիկ

չկամեցան խոստովանել Նորան և հանձնել, զրպարտեցին և խաչի վրայ սպանելու անարգ մահի դատապարտեցին, մեղադրելով Նորան՝ թէ ապստամբութեան է զրդռում ժողովրդին... Եւ, գուցէ, ճշմարիտ էլ էր այդ. իւր ոչ երկրային համոզման ամբողջ ոյժով Նա, յիրաւի, մարդկանց ապստամբելու էր հրաւիրում... բայց ի՞նչպիսի ապստամբութեան։ Ապստամբել երկրիս վրայ տիրապետող չարութեան դէմ, և այդ ամենակարող ոյժը, չարութեան ոյժը—Նորան անարգ մահուան առաջնորդեց։ Չարութեան կոյր զօրութիւնը չէր ըմբռնում, որ դորանով միայն Նորան առաւել մեծացնում է, որ Նորա չարչարանքի գործիքը մի սուրբ նշան, հրաշքի աղբիւր է դարձնում, իսկ իւր պատկերը մի անգամ էլ է ցոյց տալիս իւր ամբողջ զաղիր մերկութեամբ... Չէր հասկանում, որ նոյն իսկ մահը Աստուծոյ ձեռքին է, ուստի և հէնց այդ պատճառով անզօր է բոլորովին Նորա առաջ։ Նորա Որդին խաչի վրայ մեռնելուց երեք օր յետոյ յաղթեց այդ մահուան և յարութիւն առաւ գերեզմանից... ինքս՝ սեփական աչքով տեսայ Նորան յարութիւն առած և յափշտակուում էի Նորա Աստուածային խօսքերով... Այդ բոլէից ինքս ինձ ամբողջապէս հոգով և մարմնով Նորան նուիրուեցի և որոշեցի Նորան ծառայել։ Իւր հրաշալի յարութիւնից վեց շաբաթ յետոյ Նա կրկին դարձաւ, համբարձաւ երկինք, որտեղից իջել էր երկիր, որպէսզի մեզ՝ խաւարի մէջ խարխափողներիս առաջ բանար ճշմարտութեան դուռը։ Եւ երբ Նա, պլլուած հրաշալի ամպով, պանում—բարձրանում էր դէպի անհուն—բարձրը, ես կամենում էի ազատել հոգիս իւր մարմնաւոր կապանքից, որպէսզի նա ևս պանար Նորա յետևից. բայց այդ բոպէին ըմբռնեցի, որ դրանով հէնց աւելի ևս կկապէի Նորան երկրի հետ, որովհետև դեռ ևս մեղքի ծանրութիւնից չէր սրբուել... Ձնայելով Աստուծոյ Որդու հրաշալի յարութեանը և Նորա երկինք համբառնալուն, Նորա հաւատացողները մի բուռ ժողովուրդ էր միայն. մնացածները կուրացած խաւարի հոգով, չէին ուզում խոստովանել Նորան և հասարակ ծեռնածութիւն էին անուանում այն, ինչ որ ամենամեծ հրաշքն էր։ Այնուհետև սկսեցին հալածել Նորա հետևողներին... ինքս եմ լսել, թէ

ինչպէս էին ծաղրի նիւթ դարձնում այն հանգամանքը, որ ինքն իրեն Աստուծոյ Որդի անուանողը ծնուել է հասարակ մսուրի մէջ և վարում էր ամենախեղճ և պարզ ու հեզ կեանք։ «Ուրիշ բան է, եթէ նա իբրև թագաւոր ծնուած լինէր, ասում էին այդպիսիները.— նուաճէր աշխարհս արութեամբ ու ոյժով. այնպէս անէր, որ չարելը հնարաւորութիւն չունենային չարիք գործելու, իսկ բոլոր տանջուող ու ծանրաբեռնուած մարդիկ անմիջապէս ազատուէին իրենց տանջանքներից,— այդ ժամանակ թերևս կարելի կլինէր հաւատալ Նորան»։ Այդ խօսքերը հոգուս խորքը թափանցեցին և լնած հանգիստ չէին տալիս։ Ես երևակայում էի, որ եթէ յիրաւի Աստուծոյ որդին արքայական իշխանութեամբ, զօրութեամբ և անսպառ հարստութեամբ ճոխացած լինէր, ապա Նա առաւել հեշտութեամբ կմաքառէր չարութեան դէմ։ Ահա, այդ բոլորին և ծաղեց մէջս ինքս ինձ հերոսդէս արքայի ոյդին յայտարարելու միտքը. որով ձեռք ձգելով մեր նախկին թագաւորների գահը, կարող կլինէի պաշտպանել և տարածել իշխանութեան, հարստութեան և նոյն իսկ դէնքի ուժով Աստծոյ որդու վարդապետութիւնը։

Ինքնակոչ—թեկնածուն աւելի ու աւելի ոգևորուելով ոտքի կանգնեց։ Անվստահութիւնը բոլորովին չքացաւ, դէմքը վայլում էր մի ներքին լուսով և խօսքերը բղխում էին անընդհատ աղբիւրի պէս։ Նորա մէջ, երևում էր, որ մի յեղափոխութիւն էր կատարուել։ Դէնծգելով իրենից սաի ամբոյզ ծանրութիւնը, նա իրեն բաղաւոր էր զգում, որ հնարաւորութիւն ունի նոյն իսկ կայսեր առաջ պարզել իւր նուիրական մտքերը։

Ամենքը լսում էին նորան խորին, լուռ ուշադրութեամբ, և շատերն արդէն համակրական զգացումներ էին զգում դէպի այդ ինքնակերպ «երազներով տար ղ» մարդը։

Հռոմի վեհապետի բնորոշ դիմագծերով դէմքի վրայ և նորա սև, խորունկ աչերի մէջ արագ փոփոխութեամբ արտացոլում էին նորա յոյզերն ու մտքերը. որ առաջ էր գալիս իւր առաջ դատի կանչուած ինքնակոչ-թեկնածուի ջերմ խոստովանութիւնից։

Զառամեալ Պիզոնը, աւելի լաւ լսելու համար, գլուխն առաջ էր թեքել և ծեռքը ականջի մստ դրել։ Ամբողջապէս գրաւուած խօսողի ճառից, ծերուկը չէր էլ զգում, որ իւր ատամզուրկ բերանը բացուել և ստորին ծնոտը կախուել է, որ տմամբացող գլխի հետ շատ ծիծաղելի տեսք էր տալիս նորան։ Բարեբաղդաբար շրջապատողներն ուրիշ ինդրով էին ուշադրաւ, ուստի և նորա զառամեալ անկարութիւնը աչքի չէր ընկնում։ Միայն Տիբերիոսը, որի ամենատես աչքից ոչինչ չէր խուսափում, նայեց ծերունի Պրեֆեկտի զուարճալի դէմքին, աւելի ևս ուղղուեցաւ և սովորականից աւելի սղմեց իւր նուրբ շրթունքները։

Մի փոքր շունչ քաշելուց յետոյ, Աղէքսանդրը շարունակեց.

—Քո խորաթափանց միտքը, իմաստուն և ողորմած կայսր, իսկոյն ըմբռնեց, որ ես մի ինքնակոչ-թագաւոր եմ։ Այո, ես համարձակուեցայ ուղղել Աստուածային գործը։ Աստուծոյ Որդու աշխարհ բերած լոյսի յաղթութեան բուռն տենչով տարուած, հաւատացած, որ այդ բանը կարող է կատարուել միայն իշխանութեան միջոցով և ի նկատի ունենալով, որ երիտասարդ հասակումս շատերն էին զարմանում մահուան դատապարտուած Աղէքսանդր արքայորդու հետ ունեցած նմանութեամբս, օգտուեցայ այդ հանգամանքից և...

—Յայտարարեցիր քեզ Աղէքսանդր արքայորդի, որ, իբր, իւր տեղը մի ուրիշին է մահուան պատժի ուղարկել և մինչև այժմ ծածկուել է մի ապահով տեղ և ներկայի համար զանազան բարիքների և ապագայումն էլ մեծամեծ արքայական շնորհների արժանացնելու խոստումով, իւր կողմը գրաւեց արկածախնդիրների մի ահագին բազմութիւն, որոնք պատրաստ են ամեն րոպէ վազել այնտեղ, որտեղ լաւ որս կայ,—վերջացրեց Տիբերիոսը։—Այո, այժմ ինձ համար ամեն ինչ լոյսի պէս պարզ է ու հասկանալի, բարեկամ։ Ես գիտեմ Նազովրեցի Յիսուսի մասին, յետոյ լսեցի և Նորա կեանքի ու գործունէութեան մասին և շատ ցաւեցի որ Նորա մասին ինձ զեկուցին միայն այն ժամանակ, երբ արդէն շատ ուշ էր թշնամիների քինախնդրութիւնից ազատել Նորան։ Եթէ ժամանակին տեղեկութիւն

տային ինձ Նորա գործի մասին, ես, իհարկէ, թոյլ չէի տալ այդպիսի ծայրահեղ անարդարութիւն կատարուէր Նորա դէմ և կը պաշտպանէի ամէն հալածանքից... Սակայն, երևի, հէնց այդպէս էլ պիտի լինէր, որովհետև եթէ Ցիսուսը չ'չարչարուէր իւր դէպի մարդկութիւնն ունեցած անբաւ սիրոյ համար, ապա Նորա առաքինութիւնը կատարուած չէր լինի ամբողջապէս։ Այդպիսի գործերի համար արիւնոտ վախճանը գործի յաջողութեան ամենամեծ երաշխէքն է։ Ինձ համար ծանր է ու ցաւալի այս բանն արտայայտել, բայց իմ երկար կեանքի ընթացքում հասկացել եմ ու ճանաչել աշխարհը և սովորել եմ հաշտուել այդ բանի հետ... իսկ ինչ վերաբերում է քո սեփական գաղափարիդ, իմ բարեկամ, ապա հաւատա ասածներիս, որ ամէն ժամանակի ամէնից աւելի զօրաւոր և իմաստուն պետերը կարողացել են հասնել միայն այն բանին, որ յաջողեցրել են բարիք անել լոկ միայն մի քանի խղճուկ անհատների, որոնք երբեմն նոյն իսկ անարժան են եղել այդ բանին, բայց հէնց որ փորձ են արել չարիքն տրմատից խլել, այն ժամանակ աւելի մեծ ծաւալ է ստացել և կործանել նոյն իսկ իրենց։ Մտաբերիր Հիդրայի մասին եղած այլաբանութիւնը,—որքան շատ էին կրտրում նորա գլուխը, այնքան աւելի շատ էր բուսնում։ Այդ Հիդրան ինքը չարութիւնն է։ Մի՞թէ կարծում ես, որ ես, օրինակի համար, որի իշխանութիւնը անհամեմատ շատ առաւել մեծ է, քան մի աննշան, ինձնից կախում ունեցող հրէական թագաւորի իշխանութիւնը, առաւել դերադաս չէի համարիլ Եղիւսեան դաշտերի*) պետ լինել, քան Հադէսի**)։ Բայց բանն այն է, որ Եղիւսեան դաշտերը միայն կարող են գոյութիւն ունենալ գաղափարների աշխարհում, որ նկարագրել է մեզ դեռ ևս Պղատոնը, իսկ մեզ մօտ՝ աշխարհումս գոյութիւն ունենալ չի կարող, որովհետև Հադէսը գտնւում է ոչ թէ երկրիս ներսը, ինչպէս կարծում են, այլ նորա երեսին... Ահա դու ինքդ ես խոստովանում, որ կամենալով բարիք անել, ուրիշ հնարա-

*) Եղիւսեան դաշտեր, յունական դիցաբանութեան մէջ կոչւում էր արքայութիւնը։

**) Հադէս—դժոխք, սանդարամետ։

ւորութիւն չունենալու պատճառով չարիքից սկսեցիք։ Եւ հետևանքն ինչ եղաւ։ Ինքդ քեզ այնպիսի դիրքի մէջ դրիր, որը փաղ թէ ուշ, պէտք է քեզ կորստի տանէր։ Խոստովանում եմ այդ։

— Այժմ, կատարելապէս խոստովանում եմ, ամենողորմած կայսր, շտապեց պատասխանել Աղէքսանդրը։ Այդ բանը միայն այստեղ հասկացայ, երբ դու, իմաստուն կայսր, յայտնեցիր, որ ես մի ինքնակոչ-թիկնածու եմ և երբ չոքեցի առաջդ։ այդ բոպէին, կարծես լսում էի մի ձայն, որ ասում էր,— «Ով որ սուր կառնէ, սրով էլ կը մեռնի»։ Քո արածդ ինձ համար ընդունելի չէ։ Դու կամենում ես սկսել այդ գործը արեան սերմերով, որ միայն արեան հունձ կտայ։ Իմ ուզածս այդ չէ։ Մարդկային սրտերը իմ առաջ չպէտք է խոնարհուին բռնութեամբ, նենգութեամբ, ստութեամբ և ոճրագործութեամբ. այլ սիրով, հեզութեամբ և զթութեամբ։ Ինչ որ կայսերն է պատկանում՝ տուր կայսեր, ինչ որ Աստծունն՝ Աստծունն.— Այդ բոպէին զգացի, որ դա նոյն իսկ Աստուծոյ ձայնն է և ելայ բոլորովին նոր մարդ դարձած, հաստատապէս վճռած, որ հրաժարուեմ բոլորովին իմ անմիտ մտադրութիւնից և պարզապէս խոստովանեմ քո առաջ ամեն ինչ. բանամ հոգիս քո առաջ... Եւ կատարեցի... Այսօր Աստուածորդու ծննդեան օրն է։ Երդւում եմ այս մեծ օրով, որ ոչինչ չեմ թաղցրել և ասել եմ այն բոլորը, ինչ որ սրտումս ունէի։ Այժմ կատարելապէս թեթևութիւն եմ զգում և ինքս ինձ յանձնում եմ քո արդար դատաստանին, մեծազօր կայսր։ Ամեն մի վճիռ, ինչ էլ որ կը հանես ասել, ես կընդունեմ շնորհակալութեամբ և խոնարհութեամբ, որի օրինակը տուել է մեզ մեր Երկնաւոր Ուսուցիչը։

Այս խօսքերից յետոյ, որով Աղէքսանդրը վերջացրեց իւր խոստովանութիւնը, մի քայլ յետ. գնաց և ձեռները խաչելով կուրծքին, պայծառ հայեացքը ուղղեց իւր թագակիր դատաւորին։ Նորա կերպարանափոխ եղած դէմքի վրայ մի փոքր առաջ եղած շփոթութեան հետքն անգամ չկար, այլ փայլում էր կատարեալ անդորրութիւն։

— Ես հաւատում եմ քեզ, ասաց Տիբերիոսը,— և իբրև

նշան իմ ուշադրութեան դէպի քո գաղափարական և կրօնական յափշտակութեան և քո խոստովանութեան անկեղծութեան, ինչից էլ որ նա չբղխած լինի, ներում եմ քո յանցանքը, որի հիմքը այդ յափշտակութիւնն է։ Աղմուկ ու ձայնից խուսափելու համար, ես քեզ և քո գործը ժերակոյսին չեմ յանձնիլ, բայց բոլորովին էլ անպատիժ թողնել քեզ քո ինքնակոչ թեկնածութեան և այդ պատճառով առաջացած խռովութեան համար՝ ես չեմ կարող։ Ուստի և կհրամայեմ նշանակել քեզ, իբրև ժողին ծանօթ մարդու, իմ սեփական նաւերից մէկի ղեկավար, այն պայմանով, որ ժամանակին կատարեալ ազատութիւն կտանաս, հետո էլ քո ամբողջ կարողութիւնը, եթէ քո վարքով կարժանանաս այդ շնորհին... Էյ, Դօլֆօր, Հլացինտ, գոչեց կայսրը։

Ականատեսների խմբից իսկոյն զատուեցան երկու շքեղ հագնուած սպասաւոր և լուռ կանգնեցին իրենց պետի առաջ։

—Տարէք սրան ձեզ մօտ, հրամայեց Տիբերիոսը աչքերով ցոյց տալով ինքնակոչին,—առէք նորա վրայից այդ գարշարուն զգեստները և փոխարինեցէք աւելի համապատասխան շորերով։ Բայց զգուշացէք վիրաւորանք և անարգանք հասցնելուց,—նա գտնուում է իմ առանձին հովանաւորութեան տակ։

—Շնորհ ստա, արդարադատ կայսր, իրաւունք տալու՝ արտայայտեմ քեզ իմ խորին երախտագիտութիւնս քո անսահման գթասրտութեան համար,—յուզուած ձայնով արտասանեց դատապարտեալը, ծունկ չոքելով կայսեր ոտքերի առաջ և շրթունքներով համբուրելով ոտքերը,—Այսուհետև ես քո ամենահաւատարիմ և հնազանդ սարուկն եմ, որը...

—Ցօգուտ քո,—ընդհատեց նորա խօսքը Տիբերիոսը, որ չէր սիրում ծայրահեղ խոնարհութեան և անարպութեան տեսարաններ, որովհետև այդ բաները նորան աւելի էին յուզում, քան կկամենար ցոյց տալ։

Այս ասելուց յետոյ նա ելաւ և, շրջապատուած թիկնապահներով և իւր պալատականների փայլուն շքախմբով յուշիկ դ'մեց դէպի Արամազդի ամարոցը, որտեղից լսւում էր թովիչ երաժշտութեան ձայն, որ յիշեցնում էր հռոմի պետին,

թէ հասել է այդ ժամի սովորական սեղան նստելու բոպէն։

Այդ բոպէին Աղէքսանդրն էլ գլուխը բարձր բռնած, կարծես ստացած լինէր այն իշխանութիւնը, որի թեկնածու էր, գնում էր դէպի կայսերական անձնական սպասաւորների բաժանմունքը։ Վաղուց էր, որ այդչափ դոհ և բաղդաւոր չէր զգացել ինքն իրեն, ինչպէս այդ բոպէին։

Տարի ու կէս անցնելուց յետոյ, Աղէքսանդրը բոլորովին ներումն ստացած Տիբերիոսից, հետն էլ իւր բոլոր իրաւունքները, բաժանեց իւր ամբողջ կարողութիւնը և դարձաւ նործիլ քրիստոնէութեան ամենաջերմ քարոզիչներից մէ՛ը։

Թարգմ. Տ. Վ.

Տ. ՅԱԿՈԲ Բ. ՏԱՐՍՈՆԱՑԻ

164 Յակոբ քեռորդի էր Անաւարկեցի Գրիգոր կաթողիկոսին, և իբր առանց վիճակի՝ աթոռոյ եպիսկոպոս ժը ներկայ եղած է Սսոյ ժողովին. բայց ընտրութեան պանուն կ'կոչուի եպիսկոպոս Անաւարզայ (Սմբ. 130), որով յաջորդած կը լինի Յովհաննէսի, որ իբր եպիսկոպոս Անաւարզայ ներկայ եղած է Սսոյ և Ադանայի ժողովներուն։ Աւելի տեղեկութիւն չունինք Յակոբի նախընթացին վրայ, և ի հարկէ արքունեաց ուղղութեան համամիտ մէկն էր, որ կրցաւ վայելել անոր պաշտպանութիւնը, և կաթողիկոսական աթոռ բարձրանալ (1327). թէպէտ այդ պաշտպանութիւնը մշտնջենաւոր չեղաւ։ Վասն զի տասնուչորս տարի պաշտօնավարելէ յետոյ, ներքին խնդիրներու պատճառով, աթոռէ զրկուեցաւ (134), թէպէտ և յետոյ նորէն կաթողիկոսական աթոռը գրաւեց (1355), և չորս տարի ևս պաշտօն վարելով խաղաղութեամբ վախճանուեցաւ (359)։

165 Քաղաքական կացութիւնը բոլորովին շփոթ է այս միջոցին։ Լևոն Ե. Օշինի որդին, որ խնամակալներու իշխանութեան ներքև կը թագաւորէր, վատթար կեանք մը անցուց իւր պատանեկան տարիքին մէջ, մինչև որ ժամանակը հասաւ և խնամակալութենէ ազատելով, սկսաւ իւրովի վարել թագաւորութիւնը (1330)։ Առաջին գործը եղաւ սպանել իւր աներ և թագաւորութեան խնամակալ Օշին պայլը և նորա եղբայր Կոստանդինը, որ սպարապետութեան էր անցած։ Այդ սպանութեան իրը պատճառ ցուցուեցաւ, իբր թէ Օշին պայլ Օշին թագաւորը թունաւորած լինի, Յովհաննա թագուհիին սիրայարուած լին ելով։ Ամբաստանութեան իրը նշան նկատուեցաւ Օշին պայլին անմիջապէս Յովհաննայի հետ ամուսնանալը։ Իսկ Կոստանդին եղբօրը համար ըսուեցաւ իբր թէ այդ դաւաճանութեան կամակից եղած ըլլայ։ Սպաննել տուաւ նաև իւր կինը Ալիսեան, որ Օշին պայլին աղջիկն էր առաջին

կնոջմէն, և նորէն ամուսնացաւ Միկիլիոյ թագաւոր Փրեդերիկոսի աղջկան Կոստանդիայի հետ։ Այդ ամուսնութեամբ, աստիճան մը ևս լատին տարրը զօրացաւ արքունեաց մէջ, և շատ պաշտօններ Լատիններու սկսան տրուիլ։ Այդ պաշտօնեաներուն մէջ ամենէն յառաջադէմներն եղան, թագաւորին ազգական Լուսինեանները։

166. Լևոն Դ.-ի աղջիկներէն Զապլուն կամ Զապէլ, ամուսնացած էր Լուսինեան Ամաւրիի կոմսին Տիւրոսի, որ էր եղբայր Հենրիկոս թագաւորին Կիպրոսի (1295)։ Ամաւրի, քիչ ետքը իւր եղբօր իշխանութիւնը գրաւեց և Կիպրոսի թագաւոր եղաւ (1308), բայց երեք տարի յետոյ սպանուեցաւ (1311), և որդին Զապլուն իւր հինգ զաւակներով ապաւինեցաւ իւր եղբօր Օշին թագաւորի մօտ։ Օշին թագաւորի մեռնելէն ետքը, Օշին խնամակալ թշնամութեամբ վարուեցաւ անոր կնոջ հետ, և Լևոն մանուկ թագաւորի դէմ դաւաճանած լինելու ամբաստանութեամբ բանտարկել տուաւ Զապլունը և իւր երկու զաւակները, Հուգոնն ու Հենրիկոսը, և խեղդամահ սպաննել տուաւ բանտին մէջ (1320)։ Զապլունի երրորդ որդին՝ Գուիտոն, արդէն Կոստանդնուպոլիս գացած էր իւր մօրաքրոջ Ռիթա կայսրուհւոյն մօտ, և նորա պաշտպանութեամբ կայսերական արքունեաց մէջ լաւ դիրք ստացած և յետոյ Աքայիոյ կուսակալ անուանուած էր։ Զապլունի միւս երկու զաւակներ, Զիւան կամ Յովհաննէս և Պեմոնդ կամ Բոյեմոնդոս, իրենց մօր սպանութենէ յետոյ կրցած էին բարեկամներու ձեռնտուութեամբ Կիլիկիայէ ելլել և Հռոդոսի ասպետներուն մօտ ապահովութիւն գտնել։ Լևոն Ե. Օշին պայլը սպաննել տալէ ետքը, իրեն մօտ հրաւիրեց այդ երկու հօրաքեւորդիները, Զիւանը անուանեց գունդստապլ թագաւորութեան և ամուսնացոյց Վրաց թագաւորին աղջկան հետ, իսկ Պեմոնդը ըրաւ իշխան Կորիկոսոյ և ամուսնացոյց Պաղտին կամ Բոթէն խնամակալին աղջկան հետ։

167. Այդ միջոցին նշանաւորագոյն իրողութիւնը՝ Ունիթորայ խնդիրն է, և իդէպ է անոր սկզբնաւորութենէն սկսել խօսքերնիս։ Արդէն յիշեցինք լատին վանականութեան Արևելքի մէջ տարածուիլը, և Կիլիկիոյ արքունեաց մէջ անոնց ստացած ազդեցութիւնը, որ մինչև իսկ Հեթում Բ. թագաւոր Փրանկիսկեանց սքեմն էր առած։ Ներքին գաւառներու մէջ գացած էին Դոմինիկեանք, որոց գլխաւորն էր Բարթողիմէոս Բոնոնիացին, զոր Յովհաննէս ԻԲ. պապ՝ Մարաղայի եպիսկոպոս ձեռնադրած էր (1327)։ Սորա յանկարծ ստացած համբաւը հետաքրքրութեան մղեց, նոյն իսկ Նչեցի Եսայի վարդապետը, ժամանակին վարդապետաց վարդապետը, որուն կեդրոնն էր ի Գայլեձոր, և որուն համար

կ'ըսուի թէ մինչև երեքհարիւր հօթանասուն աշակերտներու վարդապետական գաւազան տուած է։ Սա ինքն Եսայի, իւր ընտիր աշակերտներէն մին, Քոնեցի Յովհաննէս վարդապետը, Բարթողիմէոսի մօտ յղեց, որպէս զի գնէ և տեսնէ, և եթէ օգտակար ինչ գտնէ, առնի և բերէ (1328)։ Քոնեցին Բարթողիմէոսի մօտ երթալով բոլորովին իսկ անոր յարեցաւ, և կատարելապէս անոր գործակից դարձաւ, ինքն լատիներէն սովրեցաւ և Բարթողիմէոսի և ընկերներուն հայերէն սովրեցուց, և իրարու գործակցութեամբ շատ գիրքեր լատիներէնէ հայերէն թարգմանեցին։ Բարթողիմէոս յորդորական նամակի ձև մըն ալ պատրաստեց զոր Քոնեցին հայերէնի թարգմանեց, և իւր ծանօթ վարդապետներուն մէջ ցրուեց, որոնցմէ տասներկու հոգի Քոնեցիին հետևեցան, և Բարթողիմէոսի նախագահութեամբ գումարուեցան ի Քոնա (1330), ժողով մը չափ բանակցեցան, և գտան որ Հայոց եկեղեցին շատ մոլորութիւններ ունի եղեր, և որոշեցին Հայոց մէջ հռովմէականութիւն տարածել, կամ իրենց խօսքով Հայոց եկեղեցին հռովմէականին միացնել, և այս նպատակով Ունիթոր (Unitor) կամ Միաբանող Եղբարց անունով վանական միաբանութիւն մը կազմակերպեցին, իբրև ճիւղ Քարոզիչ Եղբարց կամ Դոմինիկեանց, որոց զգեստն ալ օրինակեցին։ Վերոյշնալ տասներկու վարդապետներն էին 1. Մարգար Օծոպեցի, 2. Յակոբ Քոնեցի, 3. Հայրապետ Եւթնաղբերացի, 4. Յովհաննէս Ծուանցի, 5. Սիմէոն Բասենցի, 6. Ներսէս Տարսոնացի, 7. Առաքել Արտազեցի, 8. Լալ Արտազեցի, 9. Գրիգոր Ապրակունեցի, 10 Կոստանդին Կաղզուանցի, 11. Յովհաննէս Կաղզուանցի, և 12 Սիմէոն Խաչէնցի։ Իսկ Բարթողիմէոսի լատին ընկերներուն գլխաւորներն էին Յովհաննէս Անգղիացի և Պետրոս Արագոնացի։ Ունիթոռներուն պաշտպան և օգնական էր Գէորգ Իշխան Քոնոյ և Քոնեցւոյն քեռին։

168. Յովհաննէս Քոնեցին իւր մի նամակին մէջ կը ցուցակագրէ տասնեւինը կարծեցեալ մոլորութիւններ, զորս Ունիթորներ գտած են Հայոց եկեղեցւոյն մէջ, Բարթողիմէոսի առաջնորդութեամբ, և որք միշտ յեղեղուած ինդիրներն են, և անգամ մըն ալ յառաջ բերել աւելորդ կը դատեմք (Կալ. Ա. 515)։ Այլ հարկ է յիշել, թէ այն նամակին մէջ ուր Քոնեցին Ունիթորներու սկզբնաւորութիւնը կը պատմէ, կը յիշէ Սդանայի ժողովը, զոր Օշին թագաւոր և Կոստանդին Կեսարացի կաթողիկոս գումարեցին, և հռոմէական եկեղեցւոյ հետ միութիւնը որոշեցին (1316), ևս և իբր հեղինակութիւն յառաջ կը բերէ Արտազու եպիսկոպոս Զաքարիա Ծործորեցիին իրենց հետ համաձիտ լինելը։ Այլ Հայոց մեծ վարդապետները և գլխաւոր աթոռները համաձիտ չէին

ունիթորներուն։ Առաջին ձայն բարձրացնողներէն մին եղաւ Եսայի Նչեցի, իրենց առաջին վարդապետը, այլ լսելի չէղաւ, և Ունիթորների սաստիկ նախանձայուզութեամբ մէջտեղ ինկան խօսել և քարոզել և ամեն կողմ շփոթութիւն ձգել։ Այդ պատճառով, նոյն ինքն Լեոն Ե. Թագաւոր և Յակոբ Բ. կաթողիկոս Ջանացին չափաւորութեան բերել այդ մոլի նախանձայոյզները, առանց իրենք ալ բացարձակապէս հռովմէականութեան դէմ խօսելու։ Լեոն մինչև իսկ Ունիթորներէն մի քանիները բանտարկեց, որք խռովութիւն յարուցանելու պատճառ տուած էին (1331)։ Բարթողիմէոս և իրեններ պապին բողոքեցին, և Յովհաննէս ԻԲ. Ունիթորներու պաշտպանութեան համար գրեց Լեոնի և Յակոբի, և միանգամայն հրամայեց չվճարել երեսուն հազար ոսկին, զոր խոստացեր էր կանխաւ ի Նպաստ Հայոց։ Յակոբ Լեոնի հաճութեամբ քանի մը եպիսկոպոսներ և վարդապետներ գումարեց խորհրդակցելու, և յատուկ յատուկ խրատականներ գրեց, թէ ժողովուրդին որ Ունիթորներուն չհակառակի, և թէ Ունիթորներուն որ ժողովուրդը չգայթակղեցնեն (1332)։ Այլ կաթողիկոսին խրատները օգուտ չունեցան։ Իրաւ քիչ ետքը մեռաւ Բոնոնիացի Բարթողիմէոս եպիսկոպոս (1333), այլ Ունիթորներուն եռանդը չմարեցաւ, և գործը զօրացնելու համար Բռնեցին Հռովմ գնաց (1334), ինչպէս ինքն կը գրէ. թէպէտ Յովհաննէս ԻԲ. պապ Աւենիոն կը գտնուէր։ Բռնեցին իրեն գլխաւորութեան ներքև գտնուող հայատին միաբանութիւնը բոլորովին պապական իշխանութեան ենթարկեց, և Բռնա դարձաւ, ե Յովհաննէս Անդղիացիին ձեռքը, որ Արևելքի մէջ Տփղիսի եպիսկոպոս և պապական նուիրակ անուանած էր, ինքն և իրեններ պապին բացարձակ հնազանդութիւն ուխտեցին և երդուեցան, և Բռնեցին Յովհաննէս Հայ Դամինիկեանց կամ Ունիթորներու միաբանութեան մեծաւոր ընտրուեցաւ և հաստատուեցաւ։

169. Այդ պարագաներ զօրացուցին և սաստկացուցին Ունիթորներու մոլեռանդ նախանձայուզութիւնը, որք իրենց ընթացքով և վարդապետութեամբ ամեն կողմ խռովութիւն ձգեցին։ Ոչ միայն Հայ եկեղեցւոյ վարդապետութիւնները իբր հերետիկոսութիւն կը հռչակէին, և սովորութիւնները իբր մոլորութիւն կ'անարգէին, այլ նոյն իսկ Հայերու քրիստոնէութիւնը երկբայութեան ներքև կը թողուին։ Հայերը նորէն կը մկրտէին և նորէն կը ձեռնադրէին, հայ ծէսերը նախատանք կը մերժէին, և լատին ծէսով և լատին լեզուով կը պատարագէին և կ'աղօթէին։ Լատիներէն չգիտցողներուն համար այ լատին պատարագամատոյցը և ժամագիրքը բառ առ բառ անհարթ հայերէնի թարգմա-

նած էին, և զայն գործածել կուտային։ Ուր որ կողմնակից կը գտնէին, ամեն կերպով կը շրջապատէին, և ուր չէին գտներ, բռնութեան ալ կը ձեռնարկէին, Հայոց եկեղեցիները և պաշտամունքը հրապարակաւ կը ծաղրէին, և պահքերը և տօնները իրը սխալական կ'անարգէին։ Ասոնցմէ մէջէն երկու աւելի ձեռներեցներ և կատաղիներն էին Սիմէօն Բէգ եպիսկոպոս Կարնոյ և Ներսէս Պաղոն եպիսկոպոս Որմիոյ, զորս հաւանարար պէտք է նոյնացնել Բռնեցիին առաջին ընկերներէն Սիմէօն Բասենցի և Ներսէս Տարոնացի վարդապետներուն հետ։ Լեոն խռովութեանց հրեսէն նեղուած, նորէն ձերբակալել տուաւ Ունիթօր գործիչներէն քանի մը հաւը, որոնց մէջ նաև յիշեալ Սիմէօնն ու Ներսէսը, որք կաթողիկոսին ատեանը հանուեցան. սակայն յաջողեցան կաթողիկոսը խարել, գուցէ և կերպով մը գրաւել իսկ, քանի որ Ունիթորները ինքզինքին Սսոյ կանոններուն պաշտպան կը ցուցնէին, ինչպէս էր ինքն Յակոբ կաթողիկոսն ալ։ Ունիթորական շարժումը մեծաւ մասամբ իւր յաջողութիւնը կը պարտի Կիլիկեցւոց լատինամիտ ուղղութեան, և թէպէտ ամենքը նոյն օտարասէր հակումները կը մշակէին, բայց ամենքը միևնոյն ծրագիրի չէին հետևիր։ Միաբանողական ուղղութեան բուն գլուխներն էին։ Բռնեցւոյն միաբանութեան անդամները, որոնք Դոմինիկեան. սքիմ ալ կը կրէին, և իրենց հետևողներով Ունիթորական ճիւղը կը կազմէին։ Ասոնց հետևէն կուգային Սսականներ, որք Սսոյ գլուխները կ'ընդունէին. այլ հայ ծէս և հայ ձև կը պահէին։ Այսպէս էին նոյն իսկ լատինաց իշխանութեան ներքև եղող Կաֆայի գաղթականներ, որք ազգային ծէսեր ու սովորոյթներ պահելով հանդերձ, բաց ամենայնի լատին վարդապետութեան կը հետևէին, և կաթոլիկ անունն ալ կ'ընդունէին։ Երրորդ դասակարգ մը կը կազմէին անոնք, որ հայ ծէսէն և աւանդութիւններէն ոչինչ զոհելով, կը պնդէին թէ հայ եկեղեցւոյ վարդապետութիւնը միևնոյն է հռոմէական վարդապետութեան հետ, և հետևաբար հռոմէական դաւանութեան բոլոր կէտերը անհակառակ կ'իրացնէին։ Այսպիսիներ պարզապէս Միացեալ կը կոչուէին։

170. Սիմէօն և Ներսէս նեղումն և աղատութիւն գտնելէ յետոյ, առաջին լեզուին չփոխեցին, և իրենց ընկերներով ջանացին աւելի ևս ընդարձակել իրենց գործունէութիւնը։ Լեոն և Յակոբ, իրենց իշխանութիւնը գործածելով խնդիրը կտրուկ կերպով վերջացնելու սիրտն ու միտքը չունէին, երկուքն ալ պապութենէն արտաքին օգնութիւն և նպաստ կը սպասէին, և չէին կարող բացարձակապէս հալածել Ունիթորները, որք պապական պաշտպանութիւն կը վայելէին։ Հետևաբար պարտաւորեցան գիրով դիմել

Բենեդիկտոս ԺԲ. պապին (1334—1342), որ յաջորդած էր Յովհաննէս ԻԲ.-ին, որպէս զի ինքն իւր իշխանութեամբ զսպէ այդ մոլեգնեալ միաբանասէրները։ Քանի որ խնդիրը պապին կը մնայր, աւելի լսելի պիտի ըլլային Ունիթորները, որք պապական անկողմար ազդեցութեան կը ծառայէին, քան թագաւորն ու կաթողիկոսը։ Սիմէօն և Ներսէս իրենք ալ գրեցին պապին՝ Լևոնի և Յակոբի դէմ, թէ սուտ բարուբանքներով կը ջանան Հռոմի ազդեցութիւնը տկարացնել (1336)։ Աւելի փաստ չէր ուզեր որ պապն իւր սովորական կերպովը՝ թագաւորին և կաթողիկոսին վրայ ծանրանար, որպէս զի իրենց դաւանութիւնն ու ծէսը համաձայնեցնեն լատինականութեան, և Սսոյ կանոններուն սկզբունքովը վարուին։

171. Լևոն և Յակոբ այնչափ աւելի պատրաստ էին անսալ Հռոմի հրամաններուն, որչափ սաստիկ կը նեղուէին Եգիպտացւոց արշաւանքներէն, և Արևմտեայց վրայ դրած էին բոլոր յոյսերնին։ Բերիոյ ամիրայն, որ Եգիպտոսի սուլտանին կողմէ այն երկիրներուն կ'իշխէր, երկու բերդեր ուզեց խաղաղութիւն կնքելու համար, այլ Լևոն զլացաւ Լատիններու վստահանալով (1331), որք կ'ուզէին իրենք գրաւել նոյն բերդերը (1332)։ Պապը յորդորեց Եւրոպիոյ թագաւորները նոր Խաչակիր բանակով մը Հայերուն օգնել (1334), այլ յորդորը արդիւնք չունեցաւ, և պատճառ տուաւ Եգիպտացւոց նոր արշաւանքին (1335)։ Լևոն յետին շփոթութեան մատնուած երեսը պահեց, մինչև որ Արևմտեայք հասնին, և Կոստանդիա թագուհին պապին հետ թղթակցել սկսաւ (1336)։ Բայց Եգիպտացիք սաստկացուցին իրենց պատերազմը, աւերեցին ու սարեցին երկիրը, իսկ Եւրոպացիք իրենց խարէական ընթացքը շարունակեցին, կրօնական զիջողութիւններ պահանջեցին և քաղաքական փոխարէնները զլացան։ Ճիշտ այդ միջոցին էր որ Սիմէօն և Ներսէս Ունիթորական եպիսկոպոսներ, Հայոց եկեղեցւոյն և կաթողիկոսին և թագաւորին դէմ նոր ամբաստանագիր կը ղրկէին պապին։ Վերջապէս Լևոն բոլորովին յուսահատած հաշտութիւն կնքեց Եգիպտացիներուն հետ, և Այաս բերդը իւր շրջականներով մինչև Ջահուն գետ անոնց թողուց, և պայմանագիր ստորագրեց, որ այլևս պապին և Արևմտեայց հետ յարաբերութիւնները իսպառ պիտի դադրեցնէ (1337)։ Ասոր վրայ Բենեդիկտոս ԺԲ. պապը պաշտօնական կոնդակով արձակեց և լուծեց Լևոն թագաւորը հաստատած դաշինքէն և տուած երդումէն, և զայն արտօնեց Հռոմի հետ յարաբերութիւնները շարունակել, միշտ նոյն կրօնական պահանջումներու փոխարէն սին խոստումներ միայն առատացնելով (1338 մայիս 1)։ Լևոն յօժարեցաւ նո-

ըէն առջի ընթացքը բռնել և գաղտագողի յարաբերութիւնները կը շարունակէր պապին հետ, իսկ Ունիթօրներ չէին դադարեր իրենց տեղեկագիրներով պապին ծանուցանել, թէ Հայոց կաթողիկոսն ու Թագաւորը տակաւին անկեղծօրէն և կատարելապէս հռոմէական եղած չեն։ Այս հիմամբ պապն ալ իւր խոստումներուն փոխարէն նորանոր պայմաններ և զիջումներ կը պահանջէր, և իւր խոստումներուն ապարդիւն մնալը կ'արդարացնէր անով, որ Հայեր իրենց կատարեալ համակերպութեամբ օգնութեան արժանի եղած չեն։ Թագաւոր և կաթողիկոս այդ դժուարին պարագայից մէջ վերջապէս իրարու կ'ընդհարին։ Եգիպտացիք ալ Հայոց և Լատինաց յարաբերութիւններուն շարունակուելը տեսնելով, խաղաղութեան դաշինքը ոչնչացուած կը հրատարակեն, և դարձեալ ասպատակ կը սփռեն Կիլիկիոյ մէջ, և ամենուրեք կոտորած և աւերած կը տարածեն (1340)։

172. Ճիշտ այդ պարագային տեղի ունեցաւ Յակոբ Բ. կաթողիկոսին աթոռէն զրկուելը, որուն տեղ կ'ընտրուի Մխիթար Գոշերցի, և ոչ Գոշեցի, Գոշերոյ սուրբ ուխտին առաջնորդը (1341)։ Թէ ինչ եղաւ այդ փոփոխութեան պատճառը, ճշտիւ և յստակօրէն զրուած չենք գտներ, և մեք ալ, ուրիշներուն նման, պարզ ենթադրութեանց մէջ պիտի մնանք։ Ոմանք կարծեցին թէ Յակոբ Լևոնը կը կշտամբէր Լատինաց հետ յարաբերութիւնները վերսկսելով, Եգիպտացւոց հետ հաշտութիւնը աւերելուն համար, որով Երկրին ՀԱՆՆԵՐՈՒՆ ուղղակի պատճառ տուած կ'ըլլար, և իբր ուխտադրուժ եկեղեցական պատժոց ներքև կ'իյնար։ Լևոն կ'ըսեն, կաթողիկոսին համարձակութեան դէմ դայրանալով, դայն գահազուրկ ըրաւ (Զամչ. Գ. 339)։ Ուրիշներ ըսին, թէ եկեղեցականներ Յակոբի դէմ ելան Ունիթօրներուն պաշտպանութիւնը ստանձնելուն, և Բենեդիկտոս ԺԲ. պապին մէկ կոնդակը պաշտօնապէս հրատարակելուն համար, որուն մէջ պապը Ունիթօրներուն զրպարտութիւններուն հետեւելով, Հայոց եկեղեցւոյն մէջ բազմաթիւ մոլորութիւններ գտնուելը կը յանդիմանէր (Դէրօլ. Բ. 838)։ Ուրիշ մը պարզապէս կրօնական վէճերուն կը վերագրէ Յակոբի գահազրկութիւնը (Սիսուան 559)։ Ասոնցմէ որն ալ առնենք, չենք կրնար Յակոբի անձին պատուաւոր և նպաստաւոր պատճառ մը գտնել, և կ'երեի թէ ինքն Յակոբ, շարունակ շփոթութեանց մէջ ապրելով և հռոմէականութենէ յառաջ գալիք ՀԱՆՆԵՐԸ նախատեսնելով. այլև արի և կտրուկ ճանպու մը հետեւելու ոյժը չզգալով, և հանրոյ թեան առջև վարկը կորսնցուցած ըլլալն ալ տեսնելով, նախընտրած է կերպով մը պատասխանատուութենէ խուսափել, և կամ յօժարակամ որոշմամբ և կամ բռնադատեալ

հաճութեամբ և գոհունակութեամբ հեռացած է ծանրատաղտուկ դարձած պաշտօնէ մը։ Պապին կողմանէ գրուած ամբաստանութեանց մէջ յիշուած է, թէ Յակոբ արգիլած է Լատիններուն հայ եկեղեցիներու մէջ քարոզել, և թէ հրամայած է պապը եկեղեցւոյ գլուխ չճանչնալ. որք թէպէտ կրնան Յակոբի ներքին ուղղամտութիւնը հաստատել, այլ չեն կրնար անոր տկարամիտ համակերպութիւնը արդարացնել։

Տ. ՄԽԻԹԱՐ ԳՈՆԵՐՑԻ

173. Դժուարին պարագաներու մէջ կաթողիկոսութեան անցաւ Մխիթար, Գոնների առաջնորդը։ Մի կողմանէ Եգիպտոսի սուլդանը կը սպառնար սպառսպուռ կոտորած, միւս կողմանէ Հռոմի պապը կը սպառնար սպառսպուռ լքում, եթէ Հայեր յանձն չառնէին հերքել այն կարծեցեալ մոլորութիւնները, զորս Ունիթորներ կը վերագրէին Հայոց եկեղեցւոյն։ Դանիէլ Փրանկիսկեան կրօնաւոր քանի մը ընկերներով Լևոնի և Մխիթարի կողմէն դեսպանութեամբ պապին ղրկուեցաւ, խնդիրները պարզելու, բայց չյաջողեցան պապը համոզել։ Դանիէլ իւր կողմանէ բացատրութեան և հերքման գիր ալ տուաւ, բայց դարձեալ չը յաջողեցաւ, Բենեդիկտոս ԺԲ. կը պահանջէր ու կը պնդէր որ կաթողիկոսը ժողով գումարէ, և մի առ մի հեր քէ կարծեցեալ մոլորութիւնները, և բացարձակապէս հպատակի Հռոմայ եկեղեցւոյն կամքին և հրամաններուն։ Ներսէս Պաղոն, Մխիթարի ընտրութենէն անմիջապէս ետքը անոր դիմաց, որպէս զի զայն իւր կողմը յանկուցանէ, սակայն տեսնելով որ նա անձնատուր չի լինիր, ինքն ալ Սիմէօն Բէգի ետևէն փութաց Աւենիոն երթալ, և այն տեղ գտնուող ուրիշ ընկերներու գործակցութեամբ Հայոց եկեղեցւոյն կարծեցեալ մոլորութիւնները ցուցակագրեց, անոնց թիւը մինչև հարիւր տասնը եօթնի բարձրացնելով։ Այդ ցուցակը Բենեդիկտոս պապին ներկայացուեցաւ, որ ցուցակը նոյնութեամբ կաթողիկոսին առաջարկեց իբր բանակցութեանց և բացատրութեանց նիւթ, և իբր դաւանութեան ծրագիր (1342)։

174. Այդ միջոցին վախճանեցաւ Լևոն Է. թագաւոր (1342 օգոստոս 28), և անորդի լինելուն ժառանգութիւնը թողուց իւր հօրաքեռորդի լուսինեաններուն, որոց երիցագոյնը՝ Գուիտոն իբր թագաւոր հռչակուեցաւ, բայց բացակայ լինելուն Զիւան գունդստապլ իշխանութիւնը ստանձնեց իբր խնամակալ կամ տեղակալ, մինչև որ եղբայրը Յունաստանէն եկաւ և թագաւոր պսակուեցաւ (1342 հոկտեմբեր)։ Գուիտոն թագաւոր աշխատեցաւ մէկ

կողմանէ լատիններու օգնութեամբ իւր իշխանութիւնը զօրացնել, և միւս կողմանէ լատինամոլ ընթացքովը ազգը զզուեցուց, և ժողովրդական յուզումներու մէջ սպանուեցաւ Յովհան իւր Պեմոնդ եղբօր հետ (1344 Նոյեմբեր 27)։ Բիչ առաջ Զիւան ալ մեռած էր բնական մահուամբ (1344 օգոստոս 17), երկու փոքրիկ զաւակներ թողլով, Պորեմօնդ հինգ տարեկան և Լեւոն երկու տարեկան։ Հայոց արքունական տուն զարձած Լուսինեան ճիւղէն թագաւորելու մարդ չէր մնացած, և վերոյիշեալ յուզմանց գլխաւորներ իրենց մէջէն ընտրեցին նոր թագաւոր, որ եղև Կոստանդին որդի Պաղտին մարաջախտի, որ Լեւոն Ե.-ի չորս խնամակալներէն մին էր եղած։ Կոստանդին ամուսնացած էր Օշին խնամակալին և Յովհաննէս թագուհւոյն դստեր Մարիամին հետ, և թագաւորեց տասնուհինգ տարի. բայց մենք կրօնական խնդիրներուն զառնանք։

175. Պապին պահանջներուն առջև զինքն անել ճանպու մէջ տեսաւ Մխիթար։ Զիւան տեղակալ և Գուիտոն թագաւոր, ընիկ լատիններ, պապին բացարձակապէս հպատակելէն զատ ուրիշ կրօնական համոզում չունէին։ Իսկ Եգիպտացիք նորէն սկսեր էին ապատակել, և Արևմուտքէ օգնութիւն ստանալու ակնկալութիւնները աւելի կարևորութիւն կը ստանային։ Այդ տպաւորութեանց ներքև գումարուեցաւ Սսոյ նոր ժողովը (1342), երբ այլ ևս հնար չէր ազատուել պապերու ստիպումէն, և հարկ էր մի առ մի պատասխանել Ունիթօրներու կողմէ ցուցակագրուած՝ կարծեցեալ հարիւր տաս և եօթը մոլորութիւններուն։ Ներկայ էին քսանևինը եպիսկոպոսներ և տասնուհինգ վարդապետներ, բոլորն ալ Կիլիկիոյ և Փոքր Ասիոյ սահմաններէն միայն Տարոնոյ և Զմշկածագի անունով երկու եպիսկոպոսներ յիշուած են արևելեան վիճակներէն։ Մենք չենք ուզեր մի առ մի յառաջ բերել այն ծիծաղական և կամայական գլուխները որք իբր մոլորութիւն նշանակուած էին, և որոց պատասխանելու երկայնմտութիւնն ունեցաւ այս ժողովը։ Հետևաբար չեմք ալ ձեռնարկեր կշռել և քննել այն պատասխանները, զորս ժողովը տուած է, երբեմն հերքելով, երբեմն մեկնելով և երբեմն ալ ընդունելով։ Հետաքրքրական է գիտնալ, որ ոչ թէ մեք, այլ և ականաւոր լատին հեղինակներ, այդ ցուցակը զննելով խոստովանած են թէ այն անհիմն զրոյցներով լեցուած է։ Եղեմէս Կալանոս, Թէաթինեան լատին կրօնաւոր, ոչ կասկածաւոր անձնաւորութիւն, հարիւր տասնը եօթնէն իբր իննսունը պարապի հանելով կարևորները երեսունէ պակաս կը գտնէ։ Լըպրիւն, աղօթականաց կարգէն, միայն ութը հատը կարևոր կը համարի։ Լըքիէն, Դոմինիկեան կրօնաւոր վեցի

վերածած է, և Մանսի՝ Սերվիդեան կրօնաւոր Մխիթարի պատասխաններուն հիմնուելով կը հետևցնէ թէ յիշեալ ցուցակէն և ոչ մին կրնայ այլեւ իբր ապրաստանութեան նիւթ համարուիլ (Պէրոլ Բ. 837)։ Մխիթարի պաշտպանողական ոճը տարբեր է իւրաքանչիւր նիւթին բնութեան համեմատ։ Շատերուն կը պատասխանէ թէ բոլորովին անհիմն զրպարտութիւններ են, որք և ոչ մի հաստատութիւն ունին։ Ուրիշներուն համար կ'ըսէ, թէ լոկ սխալ իմացուածքով կամ ծուռ մեկնութեամբ մոլորութիւն կարծուեր են։ Վերջապէս մի մասին համար ալ կ'ըսէ, թէ ինչ որ Հռոմ կ'ուզէ, նոյնն ի հնուց անտի Հայ եկեղեցւոյ ճշմարիտ և պաշտօնական վարդապետութիւնն է եղած։ Մեք պէտք չունինք Մխիթարի պաշտպանողական ձևին համաձայնիլ, զի գիտենք թէ կան մեր և հռոմէականներու մէջ վարդապետութեան և ծէսի տարբերութիւններ, այլ թէ այդ տարբերութիւններուն մէջ իրաւունքը միրն է, քանի որ միրը միևնոյն հին աւանդութիւնն ու հին ծէսն է, որ շատ փոփոխութեանց ենթարկուած չէ, մինչ հռոմէական եկեղեցին իւր պապերուն ծայրայեղ իշխանութեամբ՝ շարունակ անոնց քմաց համաձայն հինները փոփոխած է։ Մեր եկեղեցին միշտ հինը կը փնտռէ և ինչ որ նախնական է, այն է ընդունելի։ Տերտուղիանոսի ասածն համեմատ, թէ որ առաջին է, այն ճշմարիտ է. Illud uerum, quod primum։

176 Մխիթար, ինչ նպատակով որ յանձնառու եղած էր ժողովական պատասխան մը յղել պապին, նոյն նպատակին չհասաւ։ Ինքն կը յուսար, թէ պապը պիտի շինուէր տրուած բացատրութիւններով, և Արևմուտք պիտի զինուէր Հայոց պաշտպանութեան. ընդհակառակը լատինականութեան ստիպումները կը շարունակէին և պայմանները կը շատնային, իսկ օգնութեան նշոյլն անգամ չէր երևէր։ Հայերը զայրացան, և իրենց զայրոյթը թափեցին լատին արքունիքին դէմ, և միևնոյն օր (1344 Նոյեմբեր 27) սպաննեցին Գուիտոն թագաւորը և Պեմոնդ թագաւորեղբայրը, ինչպէս յիշեցինք։ Կոստանդին Պաղտինեան, Նդրեցւոց տոհմէն, որ թագաւորութիւնը գրաւեց, հակառակորդ էր Լուսինեանց, սակայն չկրցաւ լատինական տարաբերութիւններէ ազատ մնալ։ Եգիպտացիք յայտնի թշնամիներ էին. մինչ Լատինք օգնութիւն կը խոստանային, որով տիրող քաղաքականութիւնն ալ չէր կրնար զանց ընել Լատիններու հաճելի լինելու ուղղութիւնը. թէպէտ և սոյն այս ուղղութիւնն էր, որ Եգիպտացիները զայրացուցած էր, և երկրին սպառնալուն կործանումը պատրաստեց։ Մխիթար կաթողիկոս ժողովական պատասխանները յղեր էր Բենեդիկտոս ԺԲ. պապին, սակայն նա մեռած էր երբ թուղթերը հասան, և անոր

յաջորդած էր Կղեմէս Զ. (1342—1352)։ Հայոց զրպարտիչները զոհ չիղան ձեռք ձգուած արդիւնքով, Գուիտոնի և Պեմոնդի սպանութիւններն ալ Հայիրուն վրայ կասկած կը հրաւիրէին, և Կղեմէս պապը, խոստումներուն գործադրութիւնը յետաձգելու դիտմամբ, ցրուած պատասխանները անբաւական դատեց և նոր հարցումներ առաջարկեց։ Միւս կողմանէ երկու նուիրակներ յղեց Կիլիկիա (1346), և յետոյ խոստացաւ տարեկան տասուերկու հազար ոսկի և հազար հեծեալ զինուոր յղել Հայերուն օգնութեան, եթէ միաբանութեան գործը ըստ ամենայնի իրեն հաճոյքին համեմատ վերջացնէին (1347)։ Մխիթար և Կոստանդին նորէն սկսան պապը հաճեցնելու աշխատել, վասն զի խոստացուած նպաստները զիջողութիւն մը կ'արժէին։ Տարիներ կ'անցնէին այդ ունայն բանակցութիւններով, և ամեն յայտարարութիւն և բացատրութիւն անբաւական կը դատուէր պապին կողմէն, նոյնիսկ յոյժ խոնարհական և աղաչողական գրուածներ (1350), և Կղեմէս պապ դարձեալ ու դարձեալ հարիւր տասնը եօթը կարծեցեալ մոլորութեանց ցուցակին վրայ կը պնդէր և կատարեալ հպատակութեան յայտարարութիւն կը պահանջէր (1351 սեպտեմբեր 29)։ Իսկ Ներսէս Պաղոն և միւս Ունիթօրներ որք Արևմուտք կը գտնուէին, չէին դադրիր Հայերուն և կաթողիկոսին վրա չարախօսել։ Կղեմէսի յաջորդ Ինոնովկենտիոս Զ. պապն ալ (1352—1362), նախորդին ընթացքը շարունակեց, և գործը աւելի ևս կնճռելու համար, նոր հրահանգներ տուաւ իւր Նուիրակներուն, Հայ եկեղեցւոյ իսկութեան և դաւանութեան վրայ նոր զննութիւններ ընելու, և նուիրակներուն գործակից նշանակեց Ներսէս Պաղոն ծայրայեղ ունիթօրը, հայերէն և լատիներէն լեզուներու ծանօթ ըլլալուն պատրուակով (1353)։

177. Հպատակութեան գիրեր, խոնարհ բացատրութիւններ, զիջողական յայտարարութիւններ, զորս Մխիթար յոչ կամաց առատացուց, ինչպէս շատեր կը կարծեն, և ինչպէս Ունիթօրներն ալ պապին կարծեցուցին, չկրցան վերջնապէս պապը գոհացնել, և իբր վերջին փորձ Նախկին կաթողիկոս Յակոբ Տարսոնացին Ինոնովկենտիոս պապին մօտ ղրկուեցաւ Աւինիոն, որպէս զի իւր հեղինակութեամբ հակակշռէ Ունիթօրներու ամբաստանութիւնները։ Այդ պատուիրակութեան պարագաները ծանօթ չեն, և նորեն ոմանք զայն կեղակարծ իսկ կարծելով, լռութեամբ կ'անցնենք (Սիսուան 560)։ Մխիթար կաթողիկոս, շարունակ ակնկալութեանց ետևէն վազելէ, գործելէ և ճգնելէ, խոնարհելէ և հպատակելէ, և տասնուչորս տարի ունայն յոյսերով տառապելէ յետոյ, անյոյս վախճանեցաւ առանց յաջողութեան աղօտ նշոյլ մը տեսնելու

(1355)։ Ճիշտ այն օրերը Եգիպտացիք իրենց հրոսակները մինչև երկրին սիրտը կը հասցնէին, և Տարսոն ու Ատանա կը զարնէին։ Թերևս նոյնիսկ այս պարագայէն յառաջ եկած սիրտի ցաւը Մխիթարի մահուան պատճառն եղաւ։ Մխիթարին անձին վրայ ընդհանրապէս լաւ գաղափար մը կազմած է պատմութիւնը, և հակառակ իւր զիջողական ընթացքին, իբր ուղիղ սկզբանց և զգացմանց տէր հայրապետ մը ըմբռնուած է։ Հաստատուն փաստեր չկան այդ կարծիքը զօրացնելու սակայն հաւանականութեան լաւ նշաններ են այն հաստատամիտ վերապահութեանց ձևերը, զորս Մխիթար յայտնած է միշտ իւր գրութեանց մէջ, և երբէք զանց ըրած չէ Հայ եկեղեցւոյ աւանդութեանց և ծիսից վրայ պնդել, երբ հռոմէականութեան պայմանները առջև կը դրուէին։

Տ. ՅԱԿՈԲ Բ. ՏԱՐՍՈՆԱՑԻ, դարձեալ

178. Մխիթարին յաջորդը եղաւ նոյն ինքն իւր նախորդը, Յակոբ Բ. Տարսոնացին, որ Անաւարզեցի և Սսեցի ալ կոչուած է (1355)։ Նորա Աւինիոն այցելութիւնը կարծել տուաւ հարկաւ թէ պապերու հետ յարմարելու և Արևմուտքի օգնութիւնները փութացնելու կերպերը ուսումնասիրած և սերտած է, և կարող է դժուարին կացութեան դարման մը գտնել։ Այլ պատմութիւնը այդպիսի արդիւնաւորութիւն մը ցոյց չտար։ Ունիթորներ իրմէ զոհ չէին մնացած, ազգն ալ իր վրայ մեծ վստահութիւն չունէր, առաջին պաշտօնավարութեան ժամանակէն իբր թոյլ ճանչցուած էր, տարիքն ալ յառաջելով ծերութեան տկարութիւնը վրան ծանրացած էր։ Իւր օրով երկրին քաղաքական կացութիւնը և կրօնական վիճակը ոչ մի լաւութիւն ունեցան, և ոչ ալ կարևոր հղելութիւն մը հասուցած է մեզ պատմութիւնը։ Յակոբի երկրորդ կաթողիկոսութեան չորս տարիներուն մէջ, Կոստանդին Պաղտինեանն ալ յոգնած էր և յուսաբեկ, և ընդհանուր ազգին և երկրին վրայ անգործ յուսահատութեան թուլութիւնը սփռուած էր։

179. Իսկ Ունիթորներու միաբանութիւնը իւր շահատակութիւնները կը շարունակէր միևնոյն կերպով և ձևով, զոր ստացեր էին Քոնեցիին Հռոմ երթալուն ժամանակէն (1334)։ Հետզհետէ նոր վանքեր հիմնեցին Վրաստանի և Խրիմու մէջ, Կիլիկիոյ մէջ ալ մեծ ազդեցութիւն ստացան Սսոյ կանոններուն պաշտպանութեամբ և լատին Լուսինեաններու գործակցութեամբ։ Մինչև այն ատեն իրենց միաբանութիւնը կը նկատուէր իբրև ուրոյն և արևելեան միաբանութիւն մը, թէպէտ և Դոմինիկեանց հետ համակերպ և համաձև, այլ ոչ ձուլուած լատին միաբանութեան մէջ։

Բայց նմանողութիւններ և հետևողութիւններ հետզհետէ սաստկացան, այնպէս որ անվրէպ Հայ Ունիթօրները պիտի հասցնէին լատին Դոմինիկեանց հետ ձուլուելու, ինչպէս որ ալ վերջապէս իրականացաւ։ Ինոկենտիոս Զ. պապին հրամանով Ունիթօրներ միացան և խառնուեցան Դոմինիկեանց լատին միաբանութեան մէջ, և անոր ընդհանուր մեծաւորին հպատակութեան ներքև մտան (1356), և Հռոմ նստող Դոմինիկեանց ընդհանուր մեծաւորին ենթարկեալ գաւառական մեծաւոր մը տրուեցաւ ունիթօրներուն, Նախիջևանի գաւառի մեծաւոր անունով, թէպէտ բուն կեդրոնը Զահուկ աւանն էր։ Երկու Զահկեցի Ունիթորներ, հարազատ եղբայրներ, այդ ձուլման գործողութիւնը լրացնելու համար Հռոմ գացին, և այնտեղ, այս երկու եղբայրներէն Ելեւթերիոս միաբանութեան գաւառական մեծաւոր, և Թովմաս հոովէգաւաններու եպիսկոպոս անուանուեցան։ Այնուհետև Ունիթոր կատարելապէս և ըստ ամենայնի լատինացան, բայց այս կերպով ազգին առջև իրենց պատրուակեալ քօղը պատռեցաւ, և իբր օտար նկատուելով երեսէ ինկան, և հետզհետէ ամփոփուեցան Զահուկ աւանի շուրջը, որով և Զահկեցի անունն ալ ստացան։

Մ. Ե. Ա. ՕՐՄԱՆԵԱՆ

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1])

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

Առաջին հարցին արևմտեան Եւրոպայի հոգեկան շարժմանը, սկսած մի մարդու կեանքի տևողութեան չափ տեղի ունեցող ժամանակներում եղած կուլտուրային ծանօթները հեշտութեամբ կարող են պատասխանել։ Ցայտնի է, որ այս շարժումը ամենուրեք երևոյթների աշխարհի մանրաղնին հասկացողութիւնն ու մօտիկից դիտողութիւնը առաջ բերեց։ Երևոյթների արտաքինը մինչև այժմ չլսուած հաւաստիութեամբ ընդդրկող իմպրէսսիօնիզմի (ուժգին տպաւորութեամբ արտայայտող միջոցի) պատմագիտութեան ու երևակայութեան գործունէութեան շրջանում յաջորդում է հոգեբանական իմպրէսսիօնիզմ, որը հոգու կեանքի խորքերն է բռնում և միաժամանակ երևան է հանում այն, ինչ որ գիտակցութեան շէմքի տակ էր գտնւում։ Բնական գիտութիւններում տեղ է բռնում ուժեղ դիտողութիւնը, որը համարեա թէ սպառնում է այն միքենայական տեսութիւններին, որ շնորհիւ դարեր շարունակ աշխատող եռանդուն հետազօտողների աշխատանքի իր հաստատուն և հետազօտութեան ամեն մի յաջորդ քայլի համար իբր անպայման բաւականութիւն տուող էին նկատւում։ Ոգեհոգեկան զարգացման այս ընթացքում սոցիալ-հոգեբանական պատմագրութիւնը առանց այլ և այլութեան տեղ է բռնում. սա ոչ այլ ինչ է, բայց եթէ նորագոյն ուժեղ դիտողութեան մեծ դարձադրութիւնը պատմական նիւթի վերաբերմամբ։ Այսպիսով նա ոչ միայն արևմտեան ու միջին Եւրոպայում աւելի յառա-

---

[1]) Լումայ 1909 № 11

ջադիմութեան մի ակնկալութիւն ունի, ոչ. այլ ինչպէս որ նոր հոգեկան կեանքը մեծ մասամբ շնորհիւ տրամաբանական կապակցութիւնների ու զրդիռների ընդարձակումով է առաջ եկել և վերջիններս էլ ծագում են նորագոյն տեխնիկական, տնտեսական ու սոցիալական կուլտուրայից, այնպէս էլ այդ զարգացումը այնտեղ տեղի կունենայ, որտեղ այդ կուլտուրան է ծագկում. այսպիսով նա հաւանօրէն նոր աշխարհում, ինչպիսին է Ճապոնեան, կյաղթանակէ։

Քանի որ ուրեմն սոցիալ-հոգեբանական պատմագիտութեան արժէքը մեծանում է, պէտք է այստեղ նրա յարաբերութիւնը դէպի միւս գիտութիւնները առնուազն մի քանի խօսքով բացատրել։

Այստեղ ամենից պարզը նրա կապն է հոգեբանութեան հետ։ Պատմութիւնը ըստինքեան ինչ է, բայց եթէ գործադրական հոգեբանութիւն. այսպիսով հասկանալի է դառնում թէ որ տեսակ հոգեբանութիւնը պատմութեան ներքին ըմբռնման համար պէտք է ուղեցոյց լինի։ Ինչէս յաճախ, թէև ոչ այս մտքով հոգեբանութիւնը հոգեկան գիտութիւնների, մանաւանդ պատմագիտութեան մեխանիկա է անուանել։ Սակայն այլ բան է այդ կապն իմանալը, այլ բան է այդ գործադրելը։ Սրա համար անհրաժեշտ է, որ պատմական ըմբռնումը առաջ տարուի մինչև ամենախորը, տարրական անցքերը, հէնց այն անցքերը որոնց պարզաբանում է հոգեբանութիւնը և որ առնուազն անհատական հոգեբանութիւնը այն աստիճան զարգանար, որ նոյնպէս կարողանար այդ տարրական անցքերը իմացաբանօրէն քննել։ Անձնականութեան ժամանակի, մօտ 1750 թ.-ից սկսած, գիտութիւնների զարգացման համար պէտք է նկատել, որ սկզբում ոչ այս և ոչ այն տեղի չունէր։ Ինչքան քիչ էր զարգացած հոգեբանութիւնը իբր գիտութիւն, այնուամենայնիւ այն ժամանակ, երբ Կրոյցերի «Մի փոքր հոդու վերաբերմամբ» դիրքը տասնամեակներ և փոթորկի ու յոյզերի տասնամեակների առաջին մասի լրագրական հարուստ, բայց պրիմիտիվ գրականութիւնը աշխատում էր հոգեբանութեանը աւանդաբար կազմած բնազանցական հիմքերից ազատել։ Մի այնպիսի տիե-

զերական ոգի, ինչպիսին էր Կանտը, այն ժամանակ լիրաւի իրաւունք ունէր նորի այս նախասկզբներին անմիջական մասնակցութիւն ցոյց տալու։ Հոգեբանութեան այս վիճակին համապատասխանում էր և պատմութեան վիճակը։ Ցիրաւի արդէն սոցիալ-հոգեբանական հայեցակէտեր, բայց յուզումնալի մշակումն. ժողովրդի հոգի և բանաստեղծական-ռոմանտիկական խորասուզումն ոգու մէջ և այս նշանակում էր որև է անցեալի սոցիալական հոգին պարզել։

Պարզ էր, հոգեբանութիւնն ու պատմագիտութիւնը մօտ 1800-թ.-ին աշխատում էին ապահով մղման մէջ, մղուելով դէպի միմեանց մի նոր ժամանակի հիմնական պատճառներից, բայց նոքա միմեանց հանդիպելուց շատ հեռու էին։ Նրանց մէջ կային նոյնպէս գիտականօրէն անվերլուծելի հոգեբանական նիւթի ծանր ու ընդարձակ խմբեր։

Ինչպէս բոլորովին այլ կերպ է այժմ անմձնականութեան շրջանի առաջին տասնամեակներում, որը իւր շատ կտորներով իբրև հնի մի նոր կառուցուած է երևում.բայց զարգացման աւելի բարձր աստիճանի վրայ է կանգնած։ Այժմ հոգեբանութիւնը ետև է թողել հետազօտողների երկու սերունդ, որոնք նրանք քնազանցութեան մահաբեր գրկախառնութիւնից ազատել են և ինքնուրոյն գիտութիւն են դարձրել։ Հերբարտին յաջորդեց Վունդտը։ Այժմ արդէն աշխատում է մի նոր, երիտասարդ, երրորդ սերունդ այն նպատակով, որ ստացուած արդիւնքները աւելի ամբողջացնի ու ընդարձակի։ Սակայն որքան էլ այդ արդիւնքները առանձին առանձին վերցրած վիճելի են և հետազօտութեան ուղղութեան տեսակէտից իրար վերաբերմամբ տարբեր կարող են լինել, այնուամենայնիւ հնարաւոր են դարձնում անհատական հոգեբանութեան կեանքի օրինական ընթացքը դիտելու մի այնպիսի խորութեամբ, որ բոլոր անցած ժամանակներին անմատչելի էր։ Վունդտի, Էրբինգհաուզի, Միւնստերբերգի, Լիպպսի նորագոյն արժէքաւոր աշխատութիւններում գտնում են ծեռք բերուած լիուլի գանձեր հարևան գիտութիւնների գործադրութեան համար։

Այս է այն դրութիւնը, որը միջնորդապէս սոցիալ-հոգե-

կան տեսակէտից զարգացած պատմագիտութեան համար օգտակար է դառնում։ Երբ պատմագիտութիւնը պատմական եղելութեան խորքն է մտնում, գտնում է, որ հոգեբանութիւնը նրա համար աշխատել է և պէտք է համարեա՛ առանց որև է դժուարութեան հետևի անհատական հոգեկան արդիւնքներին իբր մի ուղեցոյցի, եթէ նա ուզում է իւր նորութիւնները այն ձևով յայտնել, որը յարմար է նրանց իբր ընդհանուր արժէք ունեցողների։

Այս ձևով արդէն հոգեբանութիւնն ու պատմագիտութիւնը իրար գտել են. նրանց մէջ եղած միջնորմը հեռացուած է։ Յամենայն դէպս կարելի է ասել-եթէ հնարաւոր է այսպէս արտայայտելը—թէ հոգեբանութիւնը պատմութեան համար մեծ մասամբ մեխանիկայի ծառայութիւն է մատուցանում։

Սակայն այսպիսով երկու գիտութիւնների յարաբերութիւնը դեռ ամբողջապէս նկարագրուած չէ։ Ինչպէս որ բնական ու հասակն առած մարդու հոգեբանութեանը զուգընթաց պէտք է զարգանան երեխաների ու ծերերի հոգեբանութիւնները, որպէս զի հոգեբանական երևոյթների հակադիր ընոյթը իրենց ամբողջ ընդարձակութեամբ և մարդկային հոգու կարողութեան ամբողջ շրջանը, որքան իհարկէ անհատն է քննութեան առարկայ դարձած, պարզուի և ցոյց տրուի նրանց մէջ կենսաբանական գործօնները, նոյն ձևով էլ մարդկութեան սոցիալ-հոգեկան ընդարձակութեան պարզաբանութեան համար պէտք է պատմութեան օժանդակութիւնը։ Այս դէպքում հոգեբանութիւնը օգտւում է պատմութիւնից. մի այն մարդկութեան կուլտուրական ժամանակի խորը քննութիւնից կարող է հոգեբանութիւնն առնել այն թևերը, որոնք նրան հնարաւորութիւն կտան մարդկային հոգու հակադրական ուղղութիւնները իրանց ամբողջ փորձառութեան ընդարձակութեամբ ըմբռնելու։

Այս այն կէտն է, որից միաժամանակ նորաղոյն պատմագիտութեան դէպի միւս հոգեկան գիտութիւնները ունեցած յարաբերութեան պարզաբանութիւնն է սաացւում։ Եթէ հո-

գեկան գիտութիւնները բաժանենք գործադրականի՝ ինչպիսի են աստուածաբանութիւնը, իրաւաբանութիւնը, քաղաքատնտեսութիւնը, դիւանագիտութիւնը և այլն և սահմանադրականի, ինչպիսի են լեզուի, գրականութեան, գեղարուեստի պատմութիւններ և այլն, այն ժամանակ պարզ է, որ սահմանադրական գիտակարգերը պարզապէս իբր մասեր նորագոյն պատմագիտութեան մէջ են մտնելու։ Եթէ վերջինս պէտք է կուլտուրական ժամանակի մէջ երբեմն իշխող սոցիալական հոգին և նրա փոփոխութիւնները հետապօտէ, այն ժամանակ այս կարող է անել նա, երբ նա ի նկատի ունենայ այդ ժամանակի երբեմնի պատմական մարմնացումը։ Այս հէնց լեզուի, բանաստեղծութեան, գեղարուեստի գիտութեան ու աշխարհհայեցողութեան մէջ (մտաւորական զարգացման բարձրութիւնը—եղրակացութեան ձևերը և այլն)։ Այսպիսով երևում է, սոցիալ—հոգեբանական պատմագիտութիւնը ընդհանուր հիմք է այս բոլոր գիտութիւնների և սրանք վերաբերում են նրան իբրև բաղադրող մասնիկ գիտութիւններ։ Աւելի շուտ այս դրութիւնը յարմար է գործադրական հոգեկան գիտութիւնների յարաբերութիւնը որոշելու դէպքում։ Որովհետև քանի որ սրանք մի որոշ կուլտուրական ժամանակի հոգեկան գործադրութեանն են վերաբերում, ի հարկէ այդ կուլտուրական ժամանակի ձեր դասնոթութեան կարիք ունին. այս բանը հէնց նրանց տալիս է սոցիալ-հոգեբանական պատմագիտութիւնը։

Այս կապակցութիւններից վերջապէս երևում է պատմագիտութեան երկու դերը իբր հիմք գործնական ու տեսական հոգեկան գիտութիւնների և իբր դրդող հոգեբանութեան մէջ պատմական գիտողութեան ձևը առաջ բերող։ Մի դրութիւն, որը ըստ ամենայնի պայմանաւորուած է և այն իրողութեամբ, որ հոգեկան շարժումները ժամանակի ընթացքում շատ աւելի շուտ և որակի տեսակէտից աւելի շերտաւորուած փոփոխութիւններով են մեզ երևում, քան ֆիզիքականները։ Եթէ հոգեկան ընթացքները ժամանակի ընթացքում իրենց յարաբերութեամբ համապատասխանէին ֆիզիքականին, այն ժամանակ պէտք կլինէր միայն մի մեխանիկա, այդ յարաբերութիւնը

պարզելու, որովհետև այդ դէպքում նրանք հարիւր հազար և էլ աւելի տարիներից առաջ յաջորդաբար նոյն բնոյթը պէտք է ցոյց տային, ինչ որ այսօր ունին։ Բայց յայտնի է, որ համարեա՛ ամեն տեղ, ուր որ կեանքի գաղափարը քննութեան է առնւում, այսպէս օրինակ կենդանական և բուսական օրգանիզմների շրջանում, այդպէս չէ երևում. առանձնապէս աւելի որոշ ու պարզ է մարդկային կեանքում և այս նշանակում է պատմութեան մէջ երևոյթների ժամանակի տեսակից աւելի արագ փոփոխութեան մի նշան։ Ի՞նչպէս հասկանալ, այս հնարաւոր է միայն այն ձևով, որ հոգեբանութիւնը իբրև հոգեբանական մեխանիկա, ժամանակի գործօն գաղափարները բաժան բաժան է անում և այդ պատճառով էլ բաղմատեսակ է դառնում, այդ գործօն գաղափարը պէտք է պատմագիտութիւնը ցոյց տայ։ Այսպիսով սա միաժամանակ դառնում է իրերի իսկական ընթացքին բոլորովին համապատասխանող էվոլիւցիոնական հոգեբանութիւն և իբր այդպիսին իսկապէս ինչպէս տեսական, նոյնպէս և ամբողջապէս գործնական գիտութիւնների իսկական հիմքն է դառնում։

Չի՞ որոշւում արդեօք այս վերջին նկատողութիւններով թէև ընդհանուր խօսքերով, պատմագիտութեան ունեցած յարաբերութիւնը բնագիտութեան հետ։ Ես կարծում եմ—այո՛ եթէ ֆիզիկան ու քիմիան, իբր այնպիսի գիտութիւններ, որոնց առարկաները վերջի վերջոյ ժամանակի ընթացքին են պատկանում, պատմագիտութեան մէջ չառնուին։ Իհարկէ, եթէ այդպէս վարուենք, ուրիշ ոչինչ չի մնում, բայց եթէ անօրգանական բնութեան մէջ կենսաբանական գործօններ ընդունել. այսպիսով մենք գիտութեան շրջանից դուրս կմղուենք դէպի ենթադրական աշխարհհայեցողութեան մթնոլորտը, դէպի բնազանցական մտածելակերպը։

Այս չպէտք է լինի, ինչպէս որ իրականութիւնը ցոյց է տալի, աշխարհհայեցութեան ու գիտութեան սահմանադիծը այժմ, վերջին վայրկեանին, մեր իսկական գիտողութեան շրջանից դուրս, անցել ենք։ Այս գիտողութիւնները միայն մի բան են որոշ

ցոյց տալի, որ նորագոյն պատմագիտութեան համար անվերջ լայն աշխատանքի ու պայքարի մի տեղ է բացուում և. որ հազարաւոր ջանասէր աշխատաւորներ ու ուղի բացողներ են պէտք, որպէսզի նրա հարուստ, շատ անգամ անժանօթ շրջանները սահմանուին ու արդիւնաւոր կառուցուին։

Pessimist

(Կը շարունակուի)

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ [1]

ՐՈԶԵԳԵՐԻ

Քսան և վեցերորդ կիրակի

Ընդարձակ սրահում, օջախին կպած, շինած է փուռը։ Նրա յետին պատը անցնում է հարևան սենեակը։ Այդ պատը մի քանի տեղ ճեղքուել է և նրա արանքներից ծուխ է դուրս գալիս ու այրում պառաւի աչքերը. դռնէ ինքն այդպէս է ասում։ Փուռը, ինչպէս և օջաղը, հասկանալի է, որ նորոգութեան են կարօտ։

Այս օրերը ծերունու հետ միասին դնացինք կաւ որոնելու։ Սպիտակ կաւ շատ քիչ կայ այստեղ, երկար որոնելուց յետոյ, վերջապէս քարանձաւի մէջ գտանք մի շերտ այդ կաւից։ Ադամը բահով փորում էր, իսկ ես կտորները հաւաքում տոպրակի մէջ։

Ամբողջ օրը աշխատեցինք և շարունակ լուռ էինք։ Ադամը անդադրում փորում էր ու փորում, մինչև ես պահանջեցի, որ բահը տայ ինձ. բայց նա շարունակում էր աշխատել։ Վերջապէս ստիպուեցաւ նստել. քրտինքը մաքրեց, թուում էր թէ ակնոց է դնում առուակի միակերպ կարկաչիւնին։

— Գիտէս, Հանզել, եթէ երբևիցէ քեզ դժբաղդ զգաս աշխարհիս երեսին, գիտցիր, որ փրկութիւնը միմիայն աշխատանքի մէջն է, անսահման տխրութեամբ արտասանեց նա վերջապէս։

— Բայց դուք, հայրս, առանց հանդստանալու աշխատում էք։ Այդպիսով կարող էք բոլորովին թուլանալ։ Չէ՞ որ աշխատող ուրիշ մարդիկ էլ ունիք։

---

1) Լումայ № 9

Ադամը հանեց հետներս վերցրած հացը.—կտրիր քեզ համար, Հանզէլ, և որքան կարելի է շատ։ Հին ժամանակները աշխատասէր վարձուորներ շատ կային։ Այժմ արդէն չկան այլևս։ Նուստով էլ ոչ ոքին չի կարելի հաւատ ընծայել և պէտք է նրանց հետ զգոյշ վարուել, եթէ ոչ նա կ'փախչի։ Այ, հարևան Գլէյմերի սպասաւորը երեկ գնացել է։ Այդ պատճառով էլ...

—Ինչու համար էք ասում այդ. ես բաւական եմ ծեզանից։

—Հանզէլ, նայիր ինձ։ Ես քեզ չեմ հասկանում։ Շիտակն ասեմ, արդէն երեսուն հինգ տարի է աշխատում եմ, բայց այդպիսին, ինչպիսին դու ես... կինս էլ է նոյնը ասում, բայց չի ուզում քեզ խոստովանել, վախենում է որ վարձդ չաւելացնես։ Բայց ես ասացի, որ դու այդպիսիներիցը չես։ Զէ՞ որ ինքը, Աստուածն է ուղարկել քեզ մեզ մօտ։

—Բարեկամ, դու ցաւում ես, որ Շտէյնի հետ գրաւոր պայման չեմ արել։ Սակայն այդ պայմանագիրը ինձ պէտք չէ։ Այդ տունը թողնելու պայմանով եթէ նոյն իսկ կրկնապատիկը առաջարկէին, այնուամենայնիւ ես չեմ թողնի այս մարդուն։

Ձեռքս մեկնեցի նորան։—Հաւատացէք ինձ, հայր Ադամ։ Երբևիցէ ամեն ինչ ինչ կ'պարզեմ ձեզ. իսկ մինչ այդ ընդունեցէք, թէ Հանզէլը երկնքի սրբայութիւնը սատանայու համար է օգնում մարդկանց, երբ նրա օգնութեան կարօտում են։

—Եւ դու դեռ ևս հաւատում ես, քեզպէս մարդիկ Աստուած այնքան էլ չեն ընդունում, բայց ինչ արած։ Նախապապս ասում էր՝ «սոհին ոչինչ չ'գիտէ Աստծու գոյութեան մասին, բայց այնուամենայնիւ դէպի երկինք է աճում»։ Հէնց երկրագունդն էլ մի յենակէտ պէտք է ունենայ, եթէ ոչ կը գլորուի Աստուած գիտէ թէ ուր։

Եւ սկսեց պատմել իր նախնիքների մասին։ Հինաւուրց ժամանակներից նրանք ապրել են նոյն տեղ։ Ոչ ոք, օտարութեան գնացած չէ, ամենքն էլ ապրել են իրանց պապերի սովորութիւնների համեմատ, պահպանելով նրանց բարի սովորութիւնները։ Այժմ ինքն էլ իր ունեցածը կ'տայ իր զաւակներին։

—Իսկ այդ զաւակները, շարունակեց ծերունին աւելի ցած

ծայնով,—այնքան վիշտ են պատճառում։ Մի քիչ էլ վերցրու, հանգել։

Իմ առարկութեան թէ նա լաւ երեխաներ ունի, պատասխանեց—Այո, այդպէս է։ Եթէ վատ լինէին, այսքան էլ ցաւալի չէր լինի։ Մինը միծեռնանի է, միւսը մահու չափ տխրում է...

—Վալենտինը հիւանդ է։

—Տխրում է։ Ադամը տուեց ինձ կարդալու մի ճմրուած նամակ։ Ահա նրա բովանդակութիւնը։

Թանկագին ծնողներ

Նախ և առաջ շնորհակալութիւն ուղարկած փողի համար և յայտնում եմ, որ հիւանդանոցից արդէն դուրս եմ եկել։ Չը գիտեմ թէ այժմ ինչ կ'լինի, որովհետև ոչ ոքի արձակուրդ չեն տալիս և ասում են թէ պատերազմ է լինելու։ Եթէ այդ ճշտուի, չ'գիտեմ թէ ինչ կանեմ, իսկ աւելի հաւանական է, որ մի գիշեր կ'փախչեմ տուն։ Ռոխուսի նամակը ինձ վշտացրեց. սաստիկ խղճում եմ նրան և երբ վերադառնամ գիւղը, թանգ կ'նստի որսորդին նրա ձեռքը։ Նոր ոչինչ չ'կայ։ Շատ ժանր է այս տօթին վարժութիւններ անել։ Նամակս վերջացնում եմ հազար բարևներ ուղարկելով ձեզ, սիրելի ծնողներ, եղբօրս և քրոջս և Ձեզ համ ձեզ երախտապարտ որդի՝

Վալենտին

Նամակի վերջին աւելացնում էր, թէ օտար վարձուորին շատ էլ հաւատ չընծայեն։

Այժմ միայն հասկացայ Ադամի միտքը։ Նա չէր ուզում թաղցնել ինձանից ոչ իր համակրութիւնը դէպի ինձ և ոչ էլ անվստահութիւնը։

—Ինչ որ նամակի յաւելուածին է վերաբերում, ասի ես, —դուցէ ես էլ նոյնը գրէի։ Երբ վերադառնայ, ինձ կ'ճանաչի։ Իսկ այսօր երեկոյին մենք նրան կ'պատասխանենք։ Պատերազմին վերաբերեալ լուրերը, բոլորն էլ լրագրական բաներ են։ Աշնանը անպայման արձակուրդ կ'տան։ Իսկ գիւղացի քաջ տղամարդը գիշերով տուն չի փախչի։

—Դու չես հաւատայ, ասաց Ադամը—երբ գիշերները որևէ մէկը դուռը թակում է, ինձ թւում է թէ Վալենտինն է, և որ հետևեալ օրը նրան կ'բանտարկեն և հրացանազարկ կանեն։

—Դուք միշտ չարատես էք։ Աւելի լաւ է մտածէք թէ ինչ լաւ աղայ է Ֆրանցելը։

—Ճշմարիտ է. ուսուցիչն էլ է ասում, որ նա կորչելու չէ։ Միշտ այդպէս է լինում. մէկը դէպի տուն է ծգտում, երբ միւսը մտածում է հեռանալ այնտեղից։ Իսկ աղջիկը... մի փոքր կանգ առաւ և շարունակեց—մեր հակառակիրն է դա։

Ինչպէս թւում էր այս հոգսը բոլոր միւսներից աւելի ծանր էր։

—Բարբէլը, ասի ես. սակայն ամեն հայր չի ունենայ այդպիսի սիրելի աղջիկ։

—Ամբողջ գիշերներ չեմ քնում նրա պատճառով։ Մի բան է պատահել նրան, չանդել։ Նրա սիրտն է ցաւում։

—Ես ոչ մի վատ բան չեմ նկատում։ Նրա տարիքին աւելի զուարճութիւն է հարկաւոր. իսկ Բարբէլը ուրիշ աղջիկների նման մի ընկերուհի էլ է չունի։ Շարունակ մենակ է իր խիստ մօր և հիւանդ եղբօր հետ։ Մենք ևս ոչ մի ուրախութիւն չենք կարող նրան տալ։ Այնպէս որ կամայ-ակամայ ջահել աղջիկը կսկսի տխրել։

Ադամը թեթևացած շունչ քաշեց։ Երանի թէ ինքս կարողանայի հաւատալ իմ իսկ խօսքերին։

—Ընկերուհի չունի։ Երևի այդ է պատճառը.... Բայց եթէ ուրիշ բան լինի, ես տանել չեմ կարող։

Երեկոյեան դէմ ես քաշ տուեցի կաւի տուպրակը, իսկ Ադամը բերում էր բահը. իսկ թէ որն աւելի ծանր էր զգում իրան, դժուար չէր գուշակել։

Մի բան ևս պատմեմ քեզ։ Երկուշաբթի օրը ես աշխատում էի անտառի մուտքին. պէտք է գետինը մաքրէի ծառի կոճղերից և պատրաստէի շաղդամ ցանելու համար։ Յանկարծ այնպէս թուաց, թէ անտառում մէկը կանչում է։ Հարցրի Ռո-

խերլից թէ արդեօք ո՞վ է կարող լինել։ Սկզբում ոչինչ չ՚պատասխանեց։ Սակայն ձայնը մէկ էլ լսելի եղաւ։

— Անտառի տնակիցն է դալիս ձայնը, ասացի ես։

— Այնտեղ ոչ ոք չէ բնակւում, սառնօրէն պատասխանեց տղան։

— Այնուամենայնիւ այնտեղ մէկը բղաւում է։ Գնա՛նք, տեսնենք։

Տեսնելով, որ ինձ չի կարող դիտաւորութիւնից յետ պահել, Ռոխերլը մի ացաւ ինձ և ասաց յուզմունքից հազիւ շունչ քաշելով.

— Այնտեղ, տնակում կայ մէկը։ Դա «Վարազն» է։ Ես փակեցի նրան խրտուիլակի համար։ Դու ինքդ դիտես. ինքդ պատառոտեցիր խրտուիլակը, իսկ «Վարազը» դրել էր նրա պատուհանի առաջ...

— Այդ անպիտանը միշտ անկարգութիւններ է անում։

— Անկարգութի՞ւն է անում։ Երբ առաջին անգամ բռնեցի, ուզում էի կացնով սպանել։ Նա թաղ կացաւ խրճթում։ Ես էլ վերցրի ու դուռը վրան փակեցի։ Այն ժամանակից 'ի վեր այնտեղ է։

— Ո՞ր օրուանից է բանտարկուած։

— Շաբաթուանից։

— Հո՞ սովամահ կարող է լինել։

— Այդպէս էլ պէտք է նրան։

Մտնում ենք կիրճի մօտ գտնուող խրճթին։ Ներս ենք նայում պատուհանից, «Վարազը» ամբողջովին ցնցոտիների մէջ նստած է անկիւնում։ Նկատելով մեզ, ծալում է ծեռները և խնդրում.— Աստծու խաթեր, թողէք։ Այնպէս քաղցած եմ, ա՛յնպէս քաղցած։

Դու վիրաւո՛ր եղիր, անպատուեցիր քրոջս, ճչաց Ռոխերլը, իսկ «Վարազը» պատասխանում է «քոյրդ...» և ծեռքով մի անվայել շարժում է անում.

— Ռոխերլ, ասացի ես, կարծեմ վնաս չէ դրան մի քանի օր էլ փակած պահել։ Գնա՛նք։

Եւ հեռացանք, ուշ չդարձնելով «Վարազի» ոչ աղաղանքներին, ոչ աղաղակներին և ոչ էլ անէծքներին։

Երեքշաբթի օրը ուզում էի մի ամսան ջուր տանել նրան և տեսնել թէ խելքի չի՞ եկել արդեօք։ Խրճթի դուռը բաց էր. թռչունը վանդակից դուրս էր թռել։ Իսկ նոյն երեկոյեան, ընթրիքի ժամանակ, Բարբելը ասաց.—եթէ այսօր երինջը չ՛մոլորուէր, մի դժբաղտութիւն պիտի պատահէր։ Խրճթում «Վարազն» էր և ասում էր թէ իրան բանտարկել են։ Զորս օր նստած է եղել։ Արդէն դժուարութեամբ էր խօսում։ Վազեց առուակի մօտ, վրայ ընկաւ և այնքան խմեց, մինչև որ հեռացրի։

—Դո՞ւ արձակեցիր նրան, հարցրեց Բոխերլը։

—Փառք Աստծու, որ դեռ ուշ չէր։

—Մի՞թէ չ՛գիտես, Բարբել, որ «Վարազը»...

—Վիրաւորեց ոչխարի ոտը, շտապով ընդմիջեցի ես։

Նա ոչինչ չի կասկածում և մենք լուռ ենք։ Իսկ ինձ համար և ցաւալի է և զուարճալի, տեսնել թէ ինչպիսի կատակ է անում երբեմն նախախնամութիւնը։

Թարգմ. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

***

Անցարգ սերնդի անարգ զաւակներ,
Ձեզ, խրախճանքի մեղկասէր որդիք.
Մեր բռուտ երկրի սեւ փլատակներ
Նզովք են կարդում ու բիւր նախատինք։

Կը գայ նոր սերունդ— սերունդ երկաթէ,
Օժտուած վրէժի հրեղէն ուրտով.
Ձեզ, թուլամորթներ, նա ձեզ պիտ ատէ
Եւ պէտք է յիշէ սեւ նախատինքով:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՀԱՐՈՒՍՏԻ ՄԱՅՐԸ

I

Անծրևը՝ մանրամաղ թափւում էր հորիզոնի երեսի կուտակուած մռայլ ամպերից։

Աշնանային դորշ ու լալկան երկինքը, իր այլանդակ ամպերի ծալքերում, ասես չարիքներ ունի պահած. ծանր ու խիտ ամպերը կախուել են ցած, հասել մինչև կտուրները. այդ ամբողջ թանձր դանդուածը՝ ասես վշտի երկունքով բռնուած լինի, որ ինքը լալիս է, ուրիշներին տխրեցնում, սրտները սևացնում, կուրծքները ճնշում...

Կ... աւանի շրջակայի ժայռոտ ու անտառոտ լեռները ծածկուած էին՝ վաղորդեան թանձր քօղ-մշուշով։

Արևելքը իր գոյնը չէ փոխում, միատեսակ ու միանման է միւս կողմերին։

Մռայլ օր է, ճնշող օդ, անծրևոտ եղանակ. շրջակայքը մառախուղով պատած, ամեն կողմ բնութեան դաժան պատկեր. ցուրտն էլ կատարելապէս զգալի է։ Կարօի թորնատնից, ծուխը բարձրանում է, ինչպէս հրաբուխը սարից։ Դուրսը շունը կենտահաչ է տալիս և երբեմն բարկացկոտ վրայ պրծնում. այդ լսում են թորնատան գտնուողները, բայց բանի տեղ չեն դնում՝ թէ մարդ կարող է լինել. վերջապէս լսուեց մի նուազ, բարակ ծայն. էլի անուշադրութեան ենթարկուեց և հետաքրքրուող չեղաւ՝ թէ ի՞նչ ծայն էր այդ։

Շունը հաչում է ու հաչում...

Վերստին կրկնուեց նոյն ծայնը, առաջուանից մի փոքր ուժեղ։—Կարօ՛, մի տե՛ս շունը ի՞նչի վրայ է էդպէս հաչում. դարձաւ կինը մարդուն։

Կարօն աչքերը տրորելով դուրս ելաւ։

—Ձէնդ կտրի, ա՛յ անտէր. բարկացաւ շան վրայ։

Շունը կարծես քաջալերուեց այդ խօսքերից. ոգևորուած վրայ պրծաւ՝ պատի տակին կանգնած ձեռքերը ծոցը դրած՝ պառաւ կնոջ վրայ...

— Ա՜յ շուն... բղաւեց Կարօն։

Շունը ետ-ետ կանգնեց, պոչը թափ-թափ անելով, գլուխը խոնարհեց. սկսեց ցցնուել տիրոջ ոտների շուրջը...

— Ինչքան վախտ է ըստեղ կանգնած եմ, դողդողալով խօսեց թրջուած պառաւը — շանից վախենում եմ, թէ առաջ գամ. քեմատաղ անցկացրու, անձրևի տակին սառա... ու ձեռքերը խորը տեղաւորելով ծոցի մէջ, մի քանի քայլ առաջացաւ և կանգ առաւ։

Արի՛ տուն, նանի, արի՛. թորոնը վառուում է, արի տաքացի, շորերդ չորացրու... ապա նայեց շանը, որը արդէն հեռացել էր։

Կորաքամակ պառաւը, դողդոջուն քայլերով, երերալով քայլեց դէպի տուն. Կարօն էլ հետևեց դրան, վախենալով մի դուլէ շունը գաղտագողի կբռնի խեղճ պառաւին։

Մտան ներս։ Երեխաները շարուել էին թորնի վերի կողմը և կամացուկ սխսվալէն խօսում էին. պառաւը տեղաւորուեց դրանց մօտ. տանտիկինը մի հնամաշ մինդար փռեց տակը։

— Ա՜խ, հառաչեց պառաւը — էսպէս օրը Աստուած կտրի, ի՛նչ իմնա... վոյ շորերս ջուրա դառել, ձեռքերս սառել, ոտքերս փետացել... ը՛հ... ը՛հ... պառաւը տնքում էր և սաստիկ հաղում. — ողորմի ծեր հօրը, ինչ լաւա թորոնը վառել էք... ը՛հ... ը՛հ... Ասում են դրախտն ու դժոխքը էն աշխարումնա... համա նամաղուլ են արել... թէ դրախտ... թէ դժոխք, ըստեղա... ը՛հ, օ՛յ սառել եմ... էս աշխարումս դժոխքի կեանք վարող էլ կայ, դրախտի էլ... երկու տեսակն էլ գտնուում են մեր կեանքում... էս կենդանի աշխարհում... էս աւեր աշխարհում, մարդիկ՝ հենց իրար կրծոտում, տրորում են... իրար միս ուտում... իրար արին խմում... ը՛հ, ը՛հ... վոյ, ուսերս ջուր ա դառել... շապիկս էլ թրջուելա... տանջուածին՝ Աստուած էլ օր չի տալի... ա՜խ... հառաչեց նա դառն և կռացաւ դէպի թոնիրը, ոսկրացած ձեռքերը երկարացրեց տաքացնելու։ Ծուխը իր

աղդեցութեան նշանը ցոյց տուեց, պառաւի ծերացած, խոր ընկած աչքերին և մի քանի կաթիլ ընկաւ նրանցից. նա թևքով սրբեց՝ այտերի վրայի դողդողացող կաթիլները, ապա հաղաց ու լռեց։

—Ի՞նչ ա էլէլ, նանի, ո՛վ դիտի նոր բան է պատահել... հարցրեց Կարօի կինը։

—Հա՜, չոռն ու ցաւը ինձ... մահը ինձանից հեռու է, մի հոգիս չի առնում... թէ պրծնեմ... էդ անիծուածների երեսից, էս դառն աշխարհից... որ մի լաւ օր չրտեսայ... ախ, անիծվիս բաղդ, որ մի օր ինձ համար ուրախութիւն չբերիր... հէնց միշտ սե՜ ու ցաւո՜տ օրեր... ըհ, ըհ...

—Ի՞նչի, այ նանի. դեղը ծեպա երանի տալի՝ թէ ունեւոր էք, հարուստ էք, լաւ ապրուստ ունէք. էլ ի՞նչի ես դժդոհքու բաղդից. ուրիշների աչքը ծեր վրայ ա, ծեր չափ կարողութիւն ով ունի բատեղ։

—Ի՞նչ եմ անում ունենալը... երբ ցամաք հացն էլ հալալ չեմ ուտում... կեանքը՝ փոշի ու հարստութեան մէջ չէ... ախ էս հաղը, էս միրաթ հաղը... օֆ, օֆ...

Թորնի մէջ բոցերը երևում էին ու բարձր ու ցած անում. երդիկից անձրևը թափւում էր ներս. դեռ ներսը ծուխ կար, գորշ դառը ծուխ։

—Նանի, քու տղեն քեզ բաղդէ, ունեցած հարստութիւնը քեզ կեանք. ի՞նչի ես նեղացած բաղդիցդ... խօսակցութեան մէջ մտաւ Կարօն, որ մինչև այդ՝ լուռ լսում էր պառաւի ասածները։

—Է՛հ, ինչ ասեմ, որդի... ինչ իմ գլուխն է գալիս, ծեր գրան շան գլուխն էլ չ՛գայ... շունը ինձանից շատ ու շատ լաւ է ապրում... դու քու շանը լաւ ես մտիկ տալի... քան իմ տղէն ու հարսը ինձ... պառաւը աչքերը սղմեց ու «ախ» անելով շարունակեց։—Աստծու օրը արիւն-արցունք եմ թափում... աղաչում եմ Ստեղծողին, որ վերջ տայ իմ կեանքին... ըհ, ըհ... երեկ էն բէբաղդ հարսրս էնքան ինձ տուեց... որ էս չոր ոսկորներս չարդւում է... ասես իրարից բաժանուելուս ըլի... տուած տեղերը կապուտել են, ու շատ թունդ ցաւում

է... եկել եմ, մի քիչ արաղ քսէք կապտաժներին... Մի մարդը տասը որդուց լաւ է... Օ՜ օ, ինչ օյիններ չեն խաղում իմ գլխին... Աստուած ազատէ ու փրկէ... ըհ, օֆ... դուշմանս չընկնի դրանց ձեռը... բաս մի մայր կամ տայ, հեար քաշ գայ, պահի... էս հազը իմ մահնա. մեծացնի, տան, կնկայ տէր դառնի... պառաւը լաց եղաւ—ու վերջը պատուի տեղը էս օրը գցէ՞ն... նա ցոյց տուեց, աչ թեքի վրայի կապուտաժները, որոնք ըստ երևոյթին հարուածի տեղեր էին։

Կարօն և կինը՝ զարմացմամբ, աչքերնին չռած նայեցին պառաւի կռներին ու քթների տակ ինչ որ մրթմրթացին։

Պառաւը օդի խնդրեց։ Կարօի կինը բերեց և սկսեց քսել...

—Օ՜ հ... ոհ, ոհ... մրմնջում է պառաւը ցաւագնօրէն։

Ցեռոյ բացեց մէջքը—կապուտաժները անթիւ էր. գլխի ուռուցքից պառաւը շատ անհանգստանում էր, հարուածները անողորմաբար էր իջած թշուառ կնոջ վրայ։

Խեղճ կինը՝ տնքում է, մրմնջում...

Թորնատան ծուխը բոլորովին քաշուել է. բացուել են՝ սեւացած գերանները, սիւները, մրոտուած պատերը... անծրևը միակերպ մաղում է երդիկից, կրակի բոցերը իջել են։ Երեխաները մնացել են՝ պլշած նայելով, պառաւի տնքոցին ու վռչոցին. իրանք էլ սարսռում են նրա սիրտ մղկտացնող «օ՜ֆ» «օֆ»ից։ Օդին վատ ներգործեց. հարուածների տեղերը սղլդում է...

Կարօն, կինը և երեխաները՝ լուռ են։

Պառաւը տնքում է.

—Ը հ... օֆ...

II

Կ... աւանի, հարուստ վաճառական՝ Դաւիթի մայրն էր, այդ թշուառ, ողորմելի ոսկրակոյտը, որ տարիների ծանր բեռի տակ՝ կռացել էր, երկուտակուել. տարիների հնչման ու ցաւի կնիքն էր կրում իր վրայ։ Գունատ, կնճիռներով ակօսուած երեսը տառապանք էր արտայայտում. կապոյտ դողդոջուն շրը-

թունքները, ասես պատրաստ էին՝ թոյն թափելու, նղովելու ամեն ինչ, անիծել՝ բիրտ կարծրութիւնը, մարդկանց վայրագութիւնը... Նրա մէջ ցաւի ու տանջանքի ձայնն էր խօսում. նրա մազերից—պլոկուած՝ յոնքերն ու կոպերը, կասես կրակով խանձուած լինէր. արտասուքով միշտ լի փոս ընկած աչքերը՝ իրանց մէջ վշտի կայծեր ունէին թաղցրած...

Զարհուրելի էր տեսնել այդ խեղճուկի՝ տնքոցն ու մրմունջները...

—Օֆ... չլի էն դաւակը, որ ծնողի սրտիւը չդիտի... գիշերը ծեր չարդախում մն եմ եղել... մէջքս կոտրում է... գլուխս պտոյտ է գալի... ըհ. աչքերս շաղուած է, սպիտակն ու սեր չի ջոկում... ամեն բան մութ է երևում...

—Հաց կեր, նանի. ընդհատեց նրան Կարօն։

—Էհ, հաց կուլ կը գնայ...

—Ի՞նչի համար է հարսդ քեզ ծեծել, նանի, հարցրեց Կարօն։

—Մի խնձորի... որդի։ Տղէս խնձոր էր բերել, բաց արի... ախ, էս հաղը.—մինը վեր կալա. էնտեղից հարսս՝ ոնց որ կատաղած շուն վրայ պրծաւ... ասում ա—«հարամեցիր, ջադու»... ես էլ ասի «տղիս աշխատանքնա»... «գլուխդ քարն ես տուել» ասաւ ու բոթեց... ես ընկայ պոլի*) վրայ... ետով վեր կացայ... ձեռս մի փէտի կտոր ընկաւ, դրան հասցրի մի անգամ... հէնց էդ տեսայ... փէտը ձեռքիցս խլեց...—նա ուժգին հաղալ սկսեց.—էս հաղը լինծ պիտի խեղդի... հա, ու էս օրը զցեց, հո տեսաք... ըհ, օֆ...

—Կարօ՞... դրսից լսուեց մի ձայն։

Կարօն շտապեց դուրս, Դաւիթ «աղայի» ծառան էր։

—Նանը ծեր տաննա՞, հարցրեց ծառան—դիշերը չկար, չը գիտենք ո՞ւր ա գնացել։

—Ըստեղ ա, պատասխանեց Կարօն խռոված կերպով։

—Ասա դայ, աղան կանչում է։

—Հիւանդ է, ոնց գայ, տօ. գնա աղայիդ ասա, որ նանը շատ սաստիկ հիւանդ է։

—Ո՞նց թէ հիւանդ է. զարմացաւ ծառան։

*) Յատակ

—Գիշերը մրսելա... գնա ասա։

Ծառան վազեվազ գնաց. Կարօն էլ տուն մտաւ. յայտնեց, որ ծառան էր, «Նանին» էր հարցնում։

—Գլուխը... գլուխը քարոփն էր տալի... նեղացած խօսեց պառաւը։

Դարձեալ լսուեց «Կարո՜...»։ Այս անգամ «աղան» էր եկել. խստօրէն ասաց Կարօին, որ «մօրը» դուրս բերի...

Կարօն ու կինը՝ պառաւին թևքերից բռնած դուրս բերին. խեղճ կինը ոտքի վրայ չի կարողանում կանգնել, լքքում է. գողդողում, ոտքերը անզօրացել են. գիշերուայ տեղը մեծ աղգեցութիւն է արել նաչարի վրայ։

Հասցրին տուն։

—Քաւթա՜ռ, ո՛նցա թուլացել, կ'ասես ջարդուած ըլի... խօսում էր հարսը պատշգամբից՝ խայթող հեգնանքով, հայհոյելով, և մի քանի լպիրշ բառեր բերնից թափելով։

—Սա մեզ խայտառակեց, մեր անունը կոտրեց... խօսեց Դաւիթը։

—Սատկում էլ չի՞ է՞... աղատուենք դրանից, զզուանքով աւելացրեց կինը։

Պառաւը վռչում է.

—Օ՞ֆ, օ՞ֆ...

Հարսը բացականչում է.

—Զօ՛ռ, ցա՛ւ...

Դաւիթը անասունի նման կանգնած է, խռովայոյզ է եբևում։

—Ծնող դառնաք, ծնողի պատիւը իմանաք... ծեր որդին էլ... ծեղ, իմ օրը գցի... մրմնջում էին պառաւի կապուտած շրթունքները։

Կարօն ու կինը՝ հեռացան։

Սգաւոր երկինքը՝ յօնքերը ետ էր տարել, լալկան ամպերը դեռ մրմռռ էին քամում վայրագ երկրի վրայ...

Ս. ՐՕՖՖՕՐ.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1909 ԹՈՒԱԿԱՆԸ

Դժբաղտութիւնը մարդուն հնարագէտ է դարձնում։ Հրէական ազգը դարերից 'ի վեր մատնուած է թափառաշրջիկ կեանք վարելու. նա ցրուել է աշխարհիս շուրջը գրեթէ բոլոր երկիրներ և յարմարուելով իր դրութեան՝ սկսել է մտածել իր դժբաղտ վիճակի մասին, և իրօք գտել է այն ճանապարհը, որ տանում է դէպի ազգերի բարեկեցութիւն և քաղաքակրթութիւն։ Ուսում և դրամ— ահա հրէական ազգի նպատակը, որին հասնելու համար նա իր հնարագիտութեամբ և ճարպիկութեամբ գտել է նաև այդ երկուսն էլ ձեռք բերելու հնարը։ Դրամ ձեռք բերելու գաղտնիքը հրէան գտել է վաճառականութեան մէջ. այսօր հրէից գլխաւոր պարապմունքն այդ է և դրանով շատ տեղ կարողացել է իր համար բարեկեցիկ վիճակ ստեղծել և դեռ իր ապագայի համար էլ մտածել։ Նա հիմնել է «Ալիանս Իսրայէլիդ» անունով մի համահրէական ընկերութիւն, որ, կարելի է ասել, հրէական ազգի փրկութեան խարիսխն է։ «Ալիանս Իսրայէլիտ»-ը մի հսկայական-ընկերութիւն է ամբողջ հրէութեան համար, որի նպատակն է օժանդակել աշխարհիս ամեն կողմ գտնուած հրէաների տնտեսական և մտաւորական զարգացման։ Մեր նպատակից դուրս է նկարագրել այստեղ այդ վիթխարի ընկերութեան մանրամասնութիւնները, ասենք սակայն, որ նա իր բարերար ազդեցութիւնը տարածել է ամեն կողմ և հեռաւոր հրէական վերածնութեան գաղափարը նրա էական նպատակներից մէկն է կազմում։

—

1909 թուականը արկածալից տարի եղաւ հայերի համար, որ ունէր իր լաւ և առաւելապէս իր վատ կողմերը. 1909 թուի Հայոց համար բերած աղէտներից մեծագոյնը՝ մեր Ռուբինեան հարստութեան որբանի՝ Կիլիկիայի հարուստ հողաբաժին Ադանայի հայ ազգաբնակութեան բարբարոսական ջարդն էր, որ պատմութեան մէջ պէտք է մնայ իբրև անջնջելի կոթող հայկական անխոհեմութեան և թիւրքական վայրագութեան։ 1909 թուի աղէտների թուին պէտք է վերագրել Ադանայի և հայկական ուրիշ ներքին գաւառների անբերրութիւնը, սովը, աղքատութիւնը, երկրագործութեան, խաշնարածութեան և արհեստների անկումը, կուսակցական անմիտ երկպառակութիւնները ու մանաւանդ այդ ամենի ձեռքից լքուած տարագրութիւնը բուն հայրենիքից, մանաւանդ դէպի նոր աշխարհը— Ամերիկա, ուր հայութիւնը կարծէք երկրորդ հայրենիք է ստեղծել իւր համար...

Ազգի այս դժբախտ կացութիւնը մեր մամուլի մէջ հարց է յարուցել հրէական յիշեալ «Ալիանս Իզրայելիդ»-ի նման մի ընկերութիւն կազմելու, անկախ քաղաքական նպատակներից, որ մի կենտրոնական զանձարան լինէր՝ աշխարհիս ամեն կողմ և մանաւանդ հայրենի հողի վրայ քաղաքակրթութիւն տարածելու և ժողովրդի բարեկեցութեան օգտակար լինելու։

Այդ հարցին արտասահմանեան լրագիրները նուիրել են մի քանի յօդուածներ և խնդիրը, ինչպէս երևում է, հերթական խնդիր է դառել, որի լուծման համար մտածում են հանճարեղ գլուխներ։ Օրինակ. «Բիւզանդիոն» լրագիրը գտնում է, որ հրէական «Ալիանս իզրայէլիտ»ին կարող է փոխարինել Եգիպտոսի Կայիրէ քաղաքում 1906 թուի ապրիլ 15-ին հիմնած «Հայկական բարեգործական ընդհանուր Միութիւնը», որ իրօք մի շատ համակրելի ընկերութիւն է բազմաճիւղ նպատակներով։ Այդ ընկերութիւնը հիմնեց Պողոս Նուպար փաշան, ինքը մի խոշոր գումար նուիրաբերելով և այս կարճ ժամանակում յաջողել է նա իր գործունէութիւնն այնպէս ընդարձակել, որ Տաճ-

կահայաստանի շատ քաղաքների ու աւանների դպրոցներին ու որբանոցներին նպաստներ է բաշխել և երեք տարուայ մէջ մօտ 4000 ոսկի ծախք արել—անշուշտ մի անհնարին գումար հայ աւերակ կեանքին շունչ և կենդանութիւն տալու համար։

Ուրիշները այդ համազգային ընկերութեան յարմար պաշտօնը ուզում էին տալ Պարիզի «Հայկական ընդհանուր միութեան», որ հիմակուհիմայ ներկայանում է որպէս մէկը այն բազմաթիւ հայ ընկերութիւններից, որոնք աստուածի պէս բռնում են հայկական հոգի վրայ և դեռ չը ծաղկած՝ թոռմում։

Նման «ընդհանուր միութիւններ» գրեթէ ամիսը մէկ կազմւում են ամեն կողմ առանց իրանց տիտղոսի գաղափարին ծառայելու։

Մեզ մօտ, ռուսահայերիս մէջ, այդ պաշտօնը ներկայումս կատարում է Կովկասեան հայոց բարեգործական ընկերութիւնը, բայց սրա տուած արդիւնքն էլ ռուսահայ չքաւոր ազգաբնակութեան վերին աստիճանի աղքատութեան ու տգիտութեան նկատմամբ այնքան աննշան է, որ կարիք կայ ամեն քաղաքում և ամեն գիւղում մի մի այդպիսի ընկերութիւն հիմնելու։

Այդպիսի մի միաք, սակայն, սրանից մի քանի տարի առաջ, ծագեց Թիֆլիզում մի խումբ ազգայինների մէջ՝ կազմել «Հայկազեան միութիւն» անունով մի հայկական Ալիանս Իզրայէլիտ», ամենաընդարձակ ծրագրով, որ ընդգրկում էր ռուսահայ, տաճկահայ, պարսկահայ ժողովուրդը և բոլոր հայկական գաղութները։ «Հայկազեան միութեան» նպատակը պարզ քաղաքակրթական էր. ամեն հայ պարտաւոր էր իրան անդամ համարել այն միութեան և ամեն հայ իր լուման գցել նրա մէջ։ Նա պէտք է տարածէր հայերի մէջ ուսում, գիտութիւն, արհեստներ, արուեստներ, երկրագործութիւն, տնտեսագիտութիւն, վաճառական գիտութիւններ ևն ևն, ամեն մէկ ճիւղի համար պատշաճաւոր հաստատութիւններ և հիմնարկութիւններ բանալով։

Գաղափարը այնքան ոգևորիչ էր և գրաւիչ, կարիքն այնքան ժամանակակից և պահանջը ստիպողական, որ խնդրի մշակութիւնը իր շուրջը խմբեց Թիֆլիզի հայ մըտածող դասի ահագին բանակ։ Մասնաժողովը մանրամասն ծրագիր մշակեց և պատրաստեց և հենց որ պատրաստ էր այն պատշաճաւոր իշխանութեան առաջարկելու, այն անձը՝ որին յանձնուած էր այդ մասին հոգալ, անփոյթ գտնուեց, իր ուշքը նուիրեց հայոց բարեգործական ընկերութեան ծրագրի փոփոխման և գործին նուիրուած բանակը իրան գտաւ անել վիճակի մէջ։ Իրերի այդ վիճակից օգտուեց մեր յայտնի գրագէտներից մէկը, վերցրեց դրա ծրագիրը, տարաւ Բագու և այնտեղ մի գեղեցիկ օր հրատարակուեց «Բագուի հայոց կուլտուրական միութիւնը»։ Սակայն այս մասին մենք կխօսենք մի այլ անգամ։

Ուրեմն մի անգամից առաջ եկան երկու նման հաստատութիւններ՝ Կովկասի Հ. Բ. Ը. և Բագուի Հ. կուլտ. միութիւնը։—Կարողացա՞ն արդեօք դրանք կամ կարող կը լինե՞ն «ալիանս իդրայիլիտ» ի դերը խաղալ հայ ամուլ և ամայի իրականութեան մէջ—վերին աստիճանի կասկածելի է, որքան էլ որ համակրելի նպատակներ ունենային երկուսն էլ։

Մենք համամիտ ենք արտասահմանեան մամուլի այն օրգաններին, որոնք կարծում են, որ եղած բոլոր ցանկալի և գործող ընկերութիւնները միմիայն տեղական բնոյթ ունին, և ոչ մէկը նոցանից կոչուած չէ համահայկական գործունէութիւն ունենալ յայտնի պատճառներով։ Ուստի և հասունացած խնդիր է արդէն և ժամանակի պահանջ ստեղծել մի մեծ «միութիւն», խաղաղ քաղաքակրթական նպատակներով մի ընկերութիւն, որ նպատակ ունենայ ազգային ամեն տեսակ աղէտների առաջ հսկայական օգնութիւն հասցնել թշուառ ժողովրդին և ուժեղ կերպով մղել արդի կորչող հայութիւնը դէպի լոյս և գիտութիւն և տնտեսական ապահովութիւն։

ԼՈՒՐԵՐ

Խմբագրութիւնս Ամեն. Հայոց վեհ. Կաթողիկոսից նուէր ստացաւ 2 օրինակ էջմիածնատիպ օրացոյց։

Լրագիրները հաղորդում են, որ վեհ. կաթողիկոսը կոնդակով հրամայել է, որ այսուհետև հայ հոգևոր հաստատութիւնների մէջ բոլոր գրագրութիւնները լինին աշխարհաբար լեզուով, բացի հայրապետական կոնդակները և մէկ էլ երդումը, որ կրօնական արարողութիւն է համարւում։

Հնդկաստանի օրէնսդիր ժողովը վերակազմելու համար, տեղական վաճառականութեան կողմից պատգամաւոր է ընտրուած յայտնի վաճառական պ. Արգարեանցը։ Դա յայտնի տոհմի ներկայացուցիչ է, որ ամբողջ դարի ընթացքում տուել է Հնդկաստանին մի քանի աչքի ընկնող գործիչներ դատական և առևտրական ասպարէզներում։

Կառավարութիւնը հաստատել է Կովկասի հայոց Հրատարակչական ընկերութեան կանոնադրութիւնը։ Կանոնադրութիւնը կազմուել է և առաջարկուել պ. Ս. Լիսիցեանի նախաձեռնութեամբ և, ինչպէս հաղորդում է «Հորիզոն» լրագիրը, պ. Լիսիցեանը որոշել է «Լիսիցեան և ընկ» մասնաւոր հրատարակչական խմբի հրատարակութիւնները, մեր գիտենալով մօտ եօթ հազար ռուբլի արժողութեամբ, նուիրել նորակազմ ընկերութեան։ Այդ մասին կզեկուցուի առաջիկայ ընդհանուր ժողովին։

Նիւ-Եօրկից հաղորդում են «Բագու» լրագրին. «յայտնի հայ հարուստ վաճառական Թավշանճեանի սպանող պ. Համբարձումեանը դեկտեմբերի 6-ին մահուան պատժի ենթարկուեց Սինգ-Սինգի բանտում էլէքտրական բաղկաթոռի միջոցով։ Թաւշանճեանը սպանուեց նրա համար, որ հրաժարուեց իրանից պահանջած դրամը վճարել ինչ որ «կուսակցական» պէտքերի համար։ Սպանութիւնը իր ժամանակ յուզեց հայ ժողովրդի բոլոր խաւե-

ին, իսկ Նիւ-Եորկում առաջ բերեց հակա-հայկական հոսանք, որ բարեբաղտաբար, շուտով հանդարտուեց։ Այս հանգամանքով է բացատրւում ամերիկեան դատարանի խիստ դատավճիռը»։

Նիւ Եորկի «Globe»ը հաղորդում է, որ կին բժիշկ Ռաբինովիչը էլէքտրական մի գործիք է հնարել՝ մեռածներին կեանք վերադարձնող։ Այս օրերս նա բժիշկների ներկայութեամբ մի շարք փորձեր է կատարել ճագարի վրայ։ Ճագարին սպանեցին ելեկտրական հոսանքով ընդունուած եղանակով և ներկայ եղողները միաբերան նրան մեռած անուանեցին։ Ապա տ. Ռաբինովիչը գործածութեան դրաւ իր գործիքը և առաջ բերեց էլէքտրական չափական կոչուած շարժողութիւնը. հոսանքը ուղղելով հերթով սրտին և մէջքի ողնաշարի հիմքին։ Երեք րոպէից յետ ճագարի սիրտը սկսեց զարկել և շնչառութիւնը նորոգուեց։ Շուտով կենդանին բնական դրութիւն ընդունեց և կէս ժամից յետոյ արդէն թռչկոտում էր սենեակներում։ Այնուհետև տ. Ռաբինովիչը ցոյց հանեց, թէ ինչպէս կարելի է էլէքտրական եղանակով ճագարին մեռցնել առանց որևէ նրա համար ցաւակար հետևանքների։ Նա պնդում է, որ երկու փորձերն էլ կարելի է յաջողութեամբ գործադրել մարդկանց վրայ (Т. П.)։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

— Մեր յարգելի աշխատակիցներին և բաժանորդներին խմբագրութիւնս շնորհաւորում է նոր տարին։

— Մոսկուա. Մ. Շովրեան. ձեր յօդուածը ստացանք և կտպենք յունուարի համարից։

— Ալէքս. Պնչատ.— Ձեր յօդուածը մնաց հետևեալ համարին։

— Ղարաքլիսա. Ս. Բօֆֆօր. Ձեր պատկերը մնաց հետևեալ համարում տպելու։

— Էջմիածին։ Յ. Պետրոսեան. բանաստեղծութիւնը ստացանք և կտպուի յունուարի համարում։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գրիգոր Մագիստրոսի թղթերը. ընագիրն յառաջաբանով և ծանօթութիւններով առաջին անգամ 'ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց. Ալէքս. 1910։

Մարգար. Գողթ. զինուորի յիշատակարանից, հրատ. Ծիածանի № 2. Թիֆլիս 1910։

Երևանի Հայոց Հոգևոր թեմական դպրանոցի տեղեկութիւնը. Երևան 1909.

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂԱՐԻԵՍ Գրական, Գեղարուեստական Երաժշտական պատկերազարդ հանդէս. 10 գիրք 10—ռ., 6 գիրք—8 ռ., 4 գիրք 5 ռ., մէկ գիրք—2 ռ.։
Тифлисъ, Редакція «Гехарвестъ», Tiflis (Caucase) rèdaction «Kegharvest».

Խմբագիր-Հրատ. Գար. Լևոնեան

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻՑ
Թիֆլիսում հրատարակուելու է
„ԱՐՕՐ“

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Ամսագիրը լինելու է անկուսակցական, բայց անպայման առաջադիմական ուղղութեամբ և իր էջերը լայն բացելու է բոլոր այն ձեռնհաս անձանց առաջ, որոնց սրտին մօտ է ընդհանրապէս գեղարուեստական գրականութեան և գիտութեան զարգացումը և մասնաւորապէս հայ գրականութեան և բանասիրութեան զարգացումը ու գիտութիւնների ժողովրդականացումը հայ ժողովրդի մէջ։

«ԱՐՕՐԸ» հրատարակուելու է հետևեալ ծրագրով.

I. Բելետրիստիկա—վէպեր, վէպիկներ, պատմուածքներ—ինքնուրոյն և թարգմանական։

II Հիմնական յօդուածներ քաղաքական, քաղաքատնտեսական գրականական և գիտական հարցերի մասին։

III Գրականական ընդհանուր տեսութիւն։

IV Գիտական տեսութիւն։

V Հայկական, ռուսական և օտարազգի մատենագրութիւն, գրախօսութիւն և քննադատութիւն։

VI Արևելագիտութիւն (կովկասագիտութիւն, հայագիտութիւն վրացագիտութիւն)։

VII Թատրոն և երաժշտութիւն։

«Ա ր օ ր ը» բաղկացած է լինելու 8—10 տպագրական թերթից (նարօրից)։

«Արօրի» բաժանորդագինն է տարեկան 6 ռուբլի, իսկ «Մշակ» լրագրի ՏԱՐԵԿԱՆ բաժանորդների համար՝ Թիֆլիսում—3 ռուբ., Թիֆլիսից դուրս 4 ռուբ։ Արտասահման՝ 20 ֆր., իսկ «Մշակի» տարեկան բաժանորդների համար՝ 13 ֆրանկ։

Թիֆլիս, գրասենեակ «Մշակի» յանձնել «ԱՐՕՐԻՆ»

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԼՈՒՄԱՅ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ՝ կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան	5 ռուբլի
Կէս տարին	3 ռ.
Երեք ամիսը	1 ռ. 50 կ.
Թիֆլիզում տարեկան	4 ռուբլի

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան	7 ռուբլի
Կէս տարին	4 ռ. » »
Երեք ամիսը	2 ռ. 25 կ.
Ամիսը	75 կ.

ԽԱԹԱԲԱԼԱՆ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ

Տարեկան	10 ռուբլի	Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Կէս տարին	6 ռ.	Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“. Հեռագրով՝ Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis, Caucas rédaction «Khatabala»

“ԳԻՒՂԱՏՆՏԵՍ,,

Պատկերազարդ շաբաթաթերթ (Բ. տարի «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը.— երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցատուկ բոյսերի մշակութիւն։ Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կոոպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւն։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Պօստ-արկղ և յայտարարութիւններ։

Առաջիկայ 1910 թուին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ։

«Գիւղատնտեսը» 1910 թուի իր տարեկան բաժանորդներին թերթի հատորներից դուրս տալու է որպէս նուէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը

Ռուսաստանում

Տարին	3 ռուբլի
Կէս տարին	2 ռուբլի

Արտասահմանում

Տարին	4 ռուբլի (12 ֆրանկ)
Կէս տարին	2 ռ. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція «Гюхатнтесъ». Արտասահմանից՝ Tiflis (Russie) rédaction «Guchatntess».

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը

ՀՈՐԻԶՈՆ

Գրական, քաղաքական, տնտեսական եւ հասարակական լրագիր

	ՏԱՐԵԿԱՆ	6 ԱՄՍԻԱՆԸ	3 ԱՄՍԻԱՆԸ	1 ԱՄՍԻԱՆԸ
Ռուսաստանի համար.	8 ր.—կ.	4 բուբ. 50 կոպ.	2 բուբ. 30 կոպ.	80 կոպ.
Պարսկաստանի	9 ր.—կ.	5 բուբ. — »	2 բուբ. 70 կոպ.	1 բուբ.— »
Թիւրքիայի	20 ղրշ.	70 ղրշ. — »	35 ղրշ. — »	14 ղրշ — »
Ամերիկայի	6 դոլլար	3½ դոլլար »		— — »
Եւրոպայի	30 ֆր.	18 ֆր. »		— — »

Բաժանորդագրութիւն ընդունւում է միայն իւրաքանչիւր ամսի 1-ից։ Ապառիկ ոչ ոքի թերթ չէ ուղարկւում։

1909 տարւայ տարեկան բաժանորդները կստանան թերթը՝ վճարելով միայն **6** ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція "ОРИЗОНЪ" Вельяминовская, № 16. *Արտասահմանից՝* Rédaction „H o r i z o n" Tiflis (Russie-Caucase)։

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ"

ԻԴ – 1910 ՏԱՐԻՈՅ

«Հանդէս Ամսօրեան» լոյս կտեսնէ ամեն ամսագլխին կառավարութեամբ Վիէննայի Մխիթարեան հարց և գործակցութեամբ ազգային կարող բանասէրներու. «Հանդէս Ամսօրեան» նուիրուած է ամբողջապէս ազգային հին և նոր գրականութեան· կուտայ իր էջերու մէջ ամենազգի կարճ և ընդարձակ ուսումնասիրութիւններ և տեսութիւններ հայ աշխարհին գրականութեան, լեզուին, հնախօսութեան և պատմութեան վրա։ «Հանդէս Ամսօրեայի» բաժնեգինն է կանխիկ վճարմամբ տարեկան 15 ֆր. —6 ր., Իւրաքանչիւր համար կարժէ 1, 50 ֆր·—70 կոպ.։ «Հանդէս Ամսօրեայի» բաժանորդ կարելի է գրել՝ Վիէննա, Խմբագրատունը. դիմել հասցէով՝ Rédaction de la revue „Handes Amsorya", Vienne, VI/2 Mechitharistengasse 4, *Թիֆլիս, դիմել* Mr. A. I. Mantacheff (pour Mr. Arakel Saroukhan), Tiflis *կամ «Գուտտենբերգի» գրավաճառանոցը։*

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը
(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափուում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱՆԱԽՍՈՎ.

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ.	4 ռ.
Կէս տարուանը . .	ռ. 80 կ.	.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	.	— 35 կ.
Պարսկաստանում . .	3 ռ. 50 կ.	.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.		15 ռ.

ԲԱՑԻԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXVIII ՏԱՐԻ **ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ** XXI ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և արտաքին ակնյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների և գեղագէտների։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՐՈՒԲԼԻ (1 ր.)։

2. ԱՂԲԻՒՐ և ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ և ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 3 պատկերներով տարեկան ԵՐԿՈՒ ՐՈՒԲԼԻ (2 ր.)։

3. ԱՂԲԻՒՐ դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր.)

4. ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար, տարեկան 10 ռուբլու փոխարէն 5 ր.։ Մինչև դեկտեմբ. 15-ը ստորագրող բաժանորդներին կուղարկուի և պրէմիաներր՝ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ բազմագոյն ձիթանկար և ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ, ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրուող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ ռուբլի, այսինքն փոխանակ հինգ ռուբլու վեց ՐՈՒԲԼԻ։

5. ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, Աղբիւր Ակունք, Յաւելուածներ եւ պրէմիաներ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար տարեկան 10 ր. Արտասահման 18 ր. կամ 50 ֆր։

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումայ լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ Է տարեկան 6 ռ., կէս տ. 4ռ.
Արտասահման „ 8 „ „ 5„

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7